


"Droschak"
ORGANE
de la Fédération
Révol. Arménienne.

ԴՐՈՇԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
"Droschak"
GENÈVE, (Suisse).

“ՀԱՅ ՅԵՂՈՓՈՒՆԿԱՆ ԳԱՆՆԵՑՈՒԹԵԱՆ” ՕՐԳԱՆ



Պ Ի Է Ռ Կ Ի Յ Ե Ա Ռ

1864—1912

Լաշեղի գերեզմանատանը, իրենից ոչ Հեռու, առկա են ընդհանուր, լայնատարած դամբարանի տակ 5.000 կօմ մուսուլմանները. — նրանք, որոնք 1871-ի արաբների օրերում, Ման-Մարտի բարձունքների վրայ որդեգրին ռուսներական կարմիր հանրապետությանը և արիւնահեղ կռիւներից յետոյ խմբովին կողմնակից թուրքական կառավարութեան հրամանով ընդհանուր բարեկամի հոգին գնաց միանալու — նոյն

արիւնոտ, նւիրական հողի տակ — այդ միւս ընդհանրութեան կազմին նշխարներին, որոնք հետ նա կապուած էր իր ապստամբ խառնակներով, իր մտքի ու սրտի ամենանուրբ թելերով:
Անասուլ Բրանս և Ֆրանսիական գրականութեան այլ գաղաթներ, Պրէսսանս և Ֆրանսիական հրապարակագրութեան այլ բաղադրութիւններ կազմակերպողները գնացել էին իրենց յարգանքը մատուցանելու

այդ վաղաժամ դագաղին Պարիզեան գրագէտների երիտասարդ պլէադը ողորմ է համակրելի *fin-lettre*-ի անագորոյն վախճանը, բայց թուում է թէ, այդ մահւան և այդ թաղման սիմվոլիկ արտայայտութիւնը, նրա վեմ խորհուրդը ուրիշ տեղ էր... այն փորրաթիւ հայկական պատգամաւորութեան մէջ, որ խոր սգով համակած, հետևում էր դիակառքին, որ սրտառուչ, եղբայրական գուրգուրանքով տանում էր դիակառքը ուսերի վրայ...

Պրէսսանսէ, Անատոլ Քրանս նոյնպէս ըմբոստ, յեղափոխական Քրանսիայի զաւակներ են, բայց ուրիշ շրջանի մարդիկ... Այլեւառի սրտին շատ աւելի մօտ էին՝ Տին, կլասսիկ յեղափոխութեան դէմքերն ու մեթօդները, կօմունիստների վրիժառու և ճարակող ուժերը, գարիբալդեանների կարմրավառ շապիկները, Բլանկիների ցասկոտ և դաւադիր հոգիները, որ յղացել են անցեալի մէջ այնքան ահեղ ու խիզախ ծրագիրներ, որ ծրագրել են հալեցնել վառօդի և ուժանակի հակայական հնոցի մէջ՝ աշխարհը ստրկացնող, ժողովուրդների կեանքն ու առաջագիմութիւնը խեղդող, այլանդակող բոլոր սև անըրպեաները, երկնային և երկրաւոր բռնութիւններն ու անիրաւութիւնները...

Այլեւառի սրտին շատ աւելի մօտ էին այդ յանդուգն հոգիները և նա նրանց չէր գտնում այլ ևս իր պանծալի հայրենիքում, նա նրանց փնտրում էր օտար երկրքի տակ, գտնում էր նմանները հեռաւոր Հայաստանում ու Մակեդոնիայում, ոգևորում էր Սերբուների ու Սարաֆօնների դէմքերով ու գործերով... Ճնշած, լացող հոգեվարող Հայաստանը ցնցում էր նրա բարի, զգայուն սիրտը, բայց աւելի ևս ցնցում էին Անգրանիկների յուսահատ և գահավեժ թռիչքները. հայկական մարտի ռոսագրու թիւնից շատ աւելի հրապուրիչ էր նրա համար՝ հայկական դիւցազն երգու թիւնը...

Եւ երբ մի օր, 12 տարի սրանից առաջ *Pro Armenia* - ի հիմնադրութեան օրերում, Քրանսիացի բարեկամի հետ, *Champel*-ի մենաւոր հիւրանոցի մէջ, հաւաքւել էին մտերմական ճաշի շուրջը Պրօշակի խըմբագրութեան անդամները և ժընէվի հայ ուսանողութիւնը, — Գրիտաֆօր իր հակիրճ բաժակածառի մէջ ուղղում էր համակրելի հիւրին հետևեալ նշանակալի խօսքերը.

«Մենք չենք, որ գտանք ձեզ, — այլ դուք էք որ մեզ գտաք...»

Չարմանալի ճիշտ ըմբռնում՝ Պիէս Այլեւառի յեղափոխական էութեան:

Այլեւառ պատասխանեց Գրիտաֆօրին մի զգացած ճառով. երկու յեղափոխականները այնուհետև կապեցին մտերմական կապերով. ըմբոստ և արևստագէտ Քրանսիացի հայասերին կախարհեց հայ շարժման վեներանի լուրի, համետ անձնաւորութիւնը, նրա ազդու, առաքելական պատկերը, որի մէջ նշմարում էր թերևս

վշտատանջ և ապստամբ ժողովրդի նգուցողը. Եւ ամեն անգամ մեզ հանդիպելով, նախ Գրիտաֆօրի մասին կը հարցնէր, նրա առողջութեան ու գործերին կը տեղեկանար և շատ անգամ կը յարէր.

— *Vous savez, j'ai un culte pour Christophor!* *

Եւ նա ողբաց մեր ընկերոջ մահը, ինչպէս կ'ողբար ամենամտերիմ հարազատը. *C'est une catastrophe!* «Դ՛ մի աղէտ էր, ասում էր նա, ես իմ կեանքում ոչ ոք այն աստիճան չէի սիրել ու յարգել և ոչ մի մահ այն աստիճան չէր ցաւեցրել իմ սիրտը...»

Ինքն էլ գնաց այժմ՝ Գրիտաֆօրին միանալու, ճիշտ նոյն սարիքում, յոյսերով ու ծրագիրներով բռնաւորւած...

Ինչպէ՞ս գնահատել թանկագին հանգուցեալին, ինչի՞ց սկսել... Այնքան բազմազան են հայոց դատին նրա մատուցած ծառայութիւնները, Նրանք սկսւում են հայ զուլումի նախօրեակին և շարունակւում են մինչև դագաղի Նրանք որոշ, սիստեմատիկ բնոյթ են առնում 1898—99-ի օրերից ի վեր, երբ հաստատուեց կանոնաւոր յարաբերութիւն «Դաշնակցութեան» ու Այլեւառի միջև:

«Պրօ Արմենիա»-ի միսսիօնը և գործունէութիւնը յայտնի են բոլորին. Նախաձեռնողը Գրիտաֆօրն էր, հոգին — ինքը խմբագրապետ Այլեւառը, աջ բազուկը — այն հոյակապ ծերունին, որ այսօր որգեկորոյս հօր պէս թնացել է որբացած, անդարմանելի սգի մէջ — Պրէսսանսէն:

Հայր և որդու ամենաքնքոյշ յարաբերութիւններ էին հաստատուել երկուսի միջև. մինը միւսով հպարտ էր. մինը գրում էր յօգւածներ, խտացնում էր Հայաստանից եկած լուրերն ու տեղեկութիւնները, միւսը — Պրէսսանսէն — և՛ գրում էր և միաժամանակ հնչեցնում «Պրօ Արմենիա»-ի դատը Քրանսիական պարլամենտում, ուր նա ունէր միշտ ուշադիր և պատկառոտ լսարան, որին նա միշտ հմայում էր իր ահագին երուդիսիօնով, իր նրբապաշտ ու կարկաչուն բառառոյթ և իր անկեղծ ու մաքուր, ասպետական բարկութիւններով:

Ինչքան տխուր ու ճնշող էին «Պրօ Արմենիա»-ի երկուների օրերը, Թերթի առաջին համարները անցնում էին ընդհանուր անուշադրութեան մէջ՝ Պարիզն ապրում էր իր ընտանի և փոթորկոտ վայրկեաններից մինը Տրանսպալեան պարտած հանրապետութեան վեհապետ նախագահը, Կրիւգեր, կատարում էր իր հանդիսաւոր մուտքը Քրանսիայի մայրաքաղաքը և պարիզի դիմաւորում էին ցոյցերով, ուսանաններով: Ցոյցերը երկար տևեցին. ամբողջ շաբաթներ հանրային ուշադրութիւնը կեդրոնացած էր Կրիւգերի վրայ:

Անցաւ, սակայն, ժխոր և կամաց-կամաց հայ-Քրանս

* Գիտէ՞ք, ես պաշտամունք ունիմ Գրիտաֆօրի համար

8101

սուժեան մասին — շատագոյն ճառերից մեկը, որ երբևիցէ արտասանել է այդ տխուր նիւթի աստիճան փայլուն հոգեւոր շէր, բայց ազդում էր մարդկանց վրայ իր հուսալից փաստերով, զոհուժեաններով և հարցերի իր ընդարձակ ու խորունկ ծանոթութեամբ, ազդում էր, յուզում, երբեմն արտասանեցնում 1903-ի սկզբներում, Բուդապեշտի մէջ — ուր գնացել էր Արևմտեան Քիւրթի ներկայացուցչի հետ փոքր ինչ մշակելու մաքրակամ հանրային կարիքը, խօսել տալու պարլամենտի հեղինակաւոր գեմբերին — նա նոյն ցնցող փաստերով ու զոհուժեաններով արտասանեցրեց պարլամենտի նախագահին և Այլեր Ապոստոլին, որը յետոյ անմիջապէս հակառակ Վիեննայի համադրեան գեղարարի բողոքներին, նոյն պարլամենտի շէնքում իսկ իր անձնական նախագահութեամբ ժողով գումարեց մաքուր ազգային պատգամաւորներից, խօսեց ինքը հայկական դատի մասին և կրկին խօսեցրեց Արիստոսին, նոյն ատենախօսութիւնը վերջինս կրկնեց ունգարական մամուլի բազմաթիւ ներկայացուցիչների համագումար ժողովի մէջ:

Պատասխան տեղ, զոհուժեաններ — գրում էր մեզ շարունակ փորձից, որանցով է, որ պիտի ազդենք, սթափեցնենք:

Եւ փաստերի մի անսպառ շտեմարան էր, նա ինքը Ըրաք բէկը մեզինց այնքան խորունկ ու բազմակողմանի ծանօթութիւններ ունին մեր հայկական խնդրի ու դատի մասին: Չնայած իր արտիստ, բանաստեղծական մասկազին ու խառնածին — որ սովորաբար խորշում է արքիվային տաղակալի փորփորումներից — մեր բարեկամը ունէր անսովոր համբերութիւն ու եռանդ՝ մտնելու պատմական հարցերի կնձուտ հիւսանքի մէջ խղճամիտ, զուտ գիտական մեթոդով պրպրտելու իրականութեան բոլոր խորշերը և մերկ, անժխտելի վաւերագրերով ազգելու մարդկանց ոչ այնքան զգացումների, որքան մարերի վրայ՝ շնորհիւ ու բազմակողմանի ծանօթութիւններ՝ ոչ միայն հայոց խնդրի ու շարժումների, այլ և պատմութեան, աշխարհագրութեան, շեղի մասին: Այդ բանաստեղծ, գրագետը, որ ուշի ուշի հետևում էր համաշխարհային հին ու նոր գրականութեան արտագրութիւններին և տալիս էր շարունակ իր անդուլ հետազոտութիւնների գաղափարները, *Mercure de France*-ին — նա ձեզ սիրով և իրազեկ մարդու ձեռնհասութեամբ կը պատմեր Հիւրշմանների, Միւլլերների ու Մեյիների տեսութիւնները հայկական լեզուագիտութեան վերաբերմամբ, նա ձեզ անգիր կը թուեր և ծարունի, Սասնոյ անհոյս գիւղերի անունները, աշխարհագրական դիրքը նրանց սպրած աղետները և այլն:

Ահա թէ որպիսի ընկեր կորցրինք: Մեզ հետ էր հայկական տաղանդի ազնուաբեր ելեկտրոնը, մեզ հետ էր երբ Աստուծոյ պարզել էր ապստամբութեան դրօշը՝ վերստին յիշեցնելու պայաննաւծ եւրոպային արիւն-

ներկ հայրենիքի սրբազան փանգաւանները, մեզ հետ էր երբ ապստամբ բանակը երկու ամսուայ յուսահատ դիմադրութիւնից յետոյ, սկսել էր — Գեորգի, Ասհաճի, Հրայրի, Անդրանիկի ուսմանը: Թեմա — իր տխուր նահանջը գեղի Անտր ու Ցաւորիկ, մեզ հետ էր և շարունակ թափում էր Պարիզից նստակների տարափը հարցնում էր տեղեկութիւններ ուղարկների մասին, հարցնում էր խորհուրդներ եւրոպական կարծիքը յուզելու վերաբերմամբ — մինչ Պրեսանսին, իր հոգևոր գաղափարական հայրիկը, փոթորկում էր Փրանսիական պարլամենտը իր վճիռ և յուզիչ պերճախօսութեամբ, իր վեհանախ ընդդրմաներով ընդդէմ Վարսիլի Գաղանի, իր խանգաղաւ ներբողներով ուղղած հայ ազգիկներին — մեզ հետ էր Պիեռ Արիստոս խանգաղաւութեան այն օրերում, երբ նորէն յուսագրած Աստուծոյ ապստամբութեամբ և եւրոպական դաշինքների սթափում ու շարժութեամբ՝ կազմում էինք Քրիստափորի հետ նոր ու շրիւ յիշատակագիր — անելի յստակ և ընդարձակ քան Պայիսեան մեծօրանդումը — որ յետոյ ինքը Արիստոս ներկայացրեց Դեկաւտիւն յանուն Պաշտակցութեան՝ մեզ հետ էր նա, վերջապէս Աստուծոյ կանխաշնորհ աննախնային աղէտի ժամանակ, օսմանեւ Յեղափոխութեան նախօրեակին, երբ նորէն բարձրացել էր խժոճութեան հողմը և տանջների, յուսահատութեան բառաչը: մեզ հետ էր նա 1908-ի յուլիսի վիկտոր Բերարի և Արևմտեան Քիւրթի պատերազմի հետ ներկայանում էր արտաքին գործերի մինիստր Պիշոնին, պատմում էր հայ ժողովրդի անխախճան տագնապը և լուծումներ պահանջում: Մեզ հետ էր աննախնայ և աննախապայտում — անգամ Անդհաւուր ժողովի նիստերի մէջ, Բուդապեշտում — և մենք երբեք չենք մոռանայ սիրուած ընկերոջ, բարեկամին, երբեք չենք ընչի մեր սրտերից ու մտքերից՝ այս վերջին փոթորկալի տանաձեւակի մի շարք յուզիչ գրապնքեր չենք մոռանայ — և այսօր երանապագիտութեան ու սիրոյ անխառն զգացումով, խոնարհելով, ենք այդ թարմ գամբարանի և այդ անբիծ, օգևորիչ յիշատակի առջև:

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԼԵՂՈՍՏԱՆԸ ԵՒ ՆՐԱ ԳՐՈՇԱԿԱԿԻՐ ԿՈՒՍՈՎՅՈՒԹԻՒՆԸ
 Իր հիմնադրութեան օրերից ի վեր (1892 թ. նոյեմբեր) ԼեՂ Սօցիալիստ Կուսակցութիւնը ընդունել է իր իր քաղաքական ծրարի առաջին կէտ ստեղծել Լեհական Անկախ ՌաճկաՎարական Հանրապետութեան հիմնադրումը: Կուսակցութեան անդամները պարագայի և թեթեւեղութեամբ զբաղուելու են:

... անհատները։ Այդ նշանաբանի արամաբանա-
 լան հետևանք էր զինւած ապստամբութեան անհրա-
 ճելութիւնը, որովհետեւ, բնականաբար, ուս կառու-
 լարութիւնը յաճարակամ չէր բաց թողնի իր ճանկե-
 ից մի հարուստ, բազմամարդ, կուլտուրական երկիր,
 որի նաճուածը այնքան թանկ է նստել ցարեքին և որը
 այսօր դրա փոխարէն տալիս է նրանց ամեն տարի
 ասանակ միլիոններով եկամուտ, սասնեակ հազարներով
 նորակոչներ, կերակրում է գիշարախ պաշտօնեաների մի
 մարդը հորդոս Այդպիսի մի աւար չեն բաց թողնում
 ձեռքից անգամ այսպէս անւանւած քաղաքակիրթ պե-
 տութիւնները. ո՛ւր մնաց մի այնպիսի կիսաարեւելեան
 բնակարանութիւն, որպիսին է ցարիզը։

Ուստի P. P. Տ-ի հիմնադիրները իրենց գործունեու-
 թեան սկզբից ի վեր գիտակցում էին, որ վաղ թէ ուշ
 զինւած ապստամբութեան խնդիրը պիտի ջգժի կուսակ-
 ցութեան անջլէ Ինչպէս յայտնի է, P. P. Տ-ի (Լեհ.
 Սոց. Կուսակցութեան) հայեացքները շուտով յաղթա-
 նակեցին և դարձան լեհական պրօլետարիատի սեփա-
 կանութիւն։ Անաշնորդ հիմնւած կուսակցութիւնները
 (Պրօլետարիատ, Լեհ. Բանուորական Դաշնակցու-
 թիւն և այլն) կազմալուծեցին. նոր սանդղած Լեհ.
 Թագաւորութեան Սոցիալ-դեմօկրատիան՝ դադարեցրեց
 իր գոյութիւնը, և մի առ ժամանակ (1896—1900 թ.)
 P. P. Տ-ը միակ սօցիալիստ կազմակերպութիւնն էր
 ուսական Լեհաստանում։ Կոնիսկ յետոյ, երբ Լեհ.
 Թագաւորութեան և Լիտվայի Սոցիալ-դեմօկրատիան՝
 լերկեց իր գործունեութիւնը, երբ Լեհաստանում
 հրապարակ եկաւ և հրէական «Թունդ»-ը՝ լեհ. կազմա-
 կերպեած աշխատակորներին ծնող մեծամասնութիւնը
 գնականում էր P. P. Տ-ին, մի բան, որ զիւրին է
 սուղեկը նոյնիսկ այն պաշտօնական զեկուցութեանով, որ
 ներկայացրել են այլևայլ կուսակցութիւններ։

Գնտելի գեղեցիկ, մտաւորականութեան մեջ ևս Լեհ.
 Սոց. Կուսակցութիւնը գաւառ ընդարձակ է ջերմ կողմ-
 նակցութիւն. այդտեղ նա միայն մեկ ու զօրաւոր հա-
 վանակորդ ունեցաւ՝ Ազգային Ռամկավար Կուսակցու-
 թիւնը (Կարգօրէն Դեմօկրատիա)*)։ P. P. Տ-ը
 աճեց շարունակ, չը նայեած կառավարական ծնչուճե-
 ինն թուում էր թէ Լեհաստանը պիտի մտնեար աս-
 փճանարար յեղափոխական բռնկման վայրկեանին Իրօք,
 Եակայն, նա հեռու էր դրանից։ Ընդունել մի բան, իբրև
 արամաբանօրէն անհրաժեշտ և սկսել համապատասխան
 գործողութիւնն և երբ այդ երկու բաները միշտ
 չեն յաջորդում իրարու։ Առօրեայ կեանքը պահանջում

*) Լեհ. ազատամիտ կամ լիբերալ կուսակցութիւնն է, որ
 այնպէս ասածում է խորունկ ու անհաշտ թշնամութիւն
 դեպի առաջ տիրակալութիւնը, բայց որ խորում է յե-
 ռախոսական պայքարի միջոցներէ, սահմանափակելով խա-
 շաղ դիմադրութեանը, ազգային գաղափարի, լեզուի, կուլ-
 տուրայի ուժերն, մղեաւոր պաշտպանութեամբ։ Ծ. Խ.

էր Լեհ. Սոց. Կուս. անդամից մի շարք այնպիսի քայլեր,
 որոնք ոչ մի առնչութիւն չունին զինւած կուս. հետ։
 Առօրեայ կեանքը ստիպում էր նրան զբաղուել ագի-
 տացիայով (մարքերը յուզելով), կազմակերպել, ստեղծել
 և տարածել դրականութիւն ևայլն։ Առօրեայ կեանքը,
 մի խօսքով, ժամանակ չէր տալիս մասեցու պատերազ-
 մական կամ մարտական խնդիրներէ մտախն։ Այդ պայ-
 ճանով թէ օրի ա յի մեջ մենք ամենքս (կամ յայն-
 նայն դէպս, մեծամասնութիւնը մեր մէջ) մասնու-
 էինք ապստամբութեան մասին, բայց գործնական
 ն ու մ մենք ընաւ չէինք պատրաստուած դրա համար,
 չէինք էլ իմանում, թէ ինչպէս ձեռնարկել դրան։
 Պէտք է աւելցնել, որ թեև մեր կուսակցութիւնը
 ընդունում էր ա եր ր օ ր ը (ա հարեկչական գործու-
 նեցութիւնը), իբրև կուս. մի միջոց կառավարութեան
 դէմ, սակայն չէր գործադրում այն Ֆրոյդեական աեր-
 րօրը Լեհաստանի մէջ չունի առհասարակ այն նշանա-
 կութիւնը, որ նա ռունի Ռուսաստանում, քանի որ մեզ
 մօտ կուսակցութիւնը գործ ունի միայն ստորագրեալ
 պաշտօնեաների հետ, ռեփրիշների կամակաւար։ Անգամ
 ինքնապաշտպանութեան դէպքերում Կուսակցութիւնը
 չէր հրատարակում իր գործողութիւնները, գործնական
 ն կատարելով, որ համապատասխան էին այն ժամանակայ
 պայմաններին ևսկանայի է, որ այդ հանգամանքն ևս
 չէր կարող նպաստել կուսակցութեան մէջ բազմական
 ոգու զարգացմանը։

Անհայն հաւանականութեամբ, Կուսակցութեան ու-
 ժերի աստիճանական զարգացման հետ և նրան ներգոր-
 ժութիւնը միշտ աճելով պրօլետարիատի ու գիւղացիու-
 թեան վրայ՝ P. P. Տ-ը կը դիմէր իրական գործողու-
 թիւններէ, որոնք անհրաժեշտ հետևանք են նրա փրա-
 գրի Սակայն, նրան չէր վիճակւած սպասել մինչև այդ
 վայրկեանը։ Պայծից ուսուցապօնական պատերազմը և
 կուսակցութիւնը մեկէն ի մեկ դուրեց նոր ուշաժամը
 ինքններն իր գոջև։ Անգամ չը շինելով մասնագիտօրէն
 ծանօթ ուս. զինուորական ուժերի կացութեան հետ,
 կարելի էր նախատեսել, որ պատերազմը պիտի լինէր
 երկարատև, պիտի մտնէր Ռուսաստանին լարելու իր
 բոլոր ուժերը, պիտի պատճառէր ժողովրդին հազար ու
 մի թշնամութիւններ և թերևս պիտի վերջանար անար-
 քօրէն։ Այդպիսի մի պատերազմ, կարելի է ասել շա-
 ւազոյն անիթն էր, յարմարագոյն փափանկը՝ փորձ
 անելու իրելու Ռուսպայանից լեհական նախաքները
 բայց, ինչպէս արդէն ասացինք, մերը Անկապցութիւնը
 ընաւ պատրաստուած չէր դրա համար։ Եւ հետևանք-
 ները շուտով վրայ հասանին յստաւ մ ջրգոյնոյն
 Անկարող լինելով զինւած ապստամբութեան նշանա-
 բանն արձակելու։ Կուսակցութիւնը որոշեց գեթ օգտ-
 գործել պատերազմի յարուցած յուզումը ագիտացիա-
 կան նպատակներով։ Թունցիկները հրատարակեցին

պնեղի մեծ քանակութեամբ քան երբեքէս սկսեցին
 փոխարինել ցոյցերը Սահան, դրս Տեա զուգրն թացարար
 ածեցին կառայարանն ճշունները Կոստանտնուպոլսի
 քան միջոցները բառնցներն ու նագայկաները (մետա-
 զածայր մտրակ) Տերքի շէին, զիմեցին զերի, նախ
 ցուրտ գեղը գործածեցին Արիւնը հոսեց, Բանուրնիը
 սկսեցին զէնք պահանջել հերնայաշտպանութեան հա-
 մարս Վերջպէս կուսակցութիւնը որոշեց, սարքել զին-
 ւած յոյց (յն զնն զմիջոցս մտնաւ մեծ սրբ զամ
 Յիշում եմ յայդ ժամանակը Յիշում եմ թէ ինչպէս
 մարդիկ որոնց ոչ ոք չէր կարող կատարել երկշտու-
 թեան մէջ և որոնք յետագայում ցոյց տուին իրենց
 արիւթութիւնը շատ գործերում, յիշում եմ ինչպէս նրանք,
 երկար վարանում էին նախ քան համաձայնել են թար-
 կելու, իրենց ընկերներին մահաւն վտանգի (թէեւ) շա-
 տերը յաճախ էին երազել և բազմացել զուրս գալու
 թշնամու հանգեպ զէնքը ձեռին, թայց այնուամենայնի-
 ղիւրին չէկաւ անցնել խրամատը, որ բաժանում էր
 բաղանքը գործողութիւնից, զմիջոցս որքանս որ
 Յոյցը տեղի բանեցաւ հոկտեմբերի 30-ին (1904 թ.)
 Գրիբոֆայտը հրայարակի վրայ, մարշալուսուս Գնեցին
 Թուրք թուրք պարձանակներ (բաւական վատ տեսակի),
 հրատարակեց թուրքիկ հաւարեց մեծ բաղանութիւն
 և երբ աստիկանութիւնը նեւեց սրերով ցուցարարների
 դէմ, գնդակները թափեցին, ուստիկանական շարքերի
 վրայ Ոստիկանութիւնը փախաւ, նորէն վերագարձաւ և
 սկսեց երկդուստերը հրաձգութիւնը Շուտով եկաւ զորքը
 (հոգակները պարզած գորշակներով) և ի հարկէ յաղ-
 թեց Ասկան ցոյցը իր նպատակին հասած էր Ասկան
 անգամը 1864 թ. իցի վեր (վերջին լեհական ապրե-
 տարութեան թւականն է) Ա. մարշալայի փողոցներում
 որին հոսեց ոչ միայն նրա բնակիչներին այլ և դա-
 հիաների արիւնը և զա ցնցող ապարտութիւնը արեց
 փասանների վրայ զմայր ինչ զմիջոցս որքանս որ
 Ա. յետամենայնի իրական նպատակը գեղ Տեա եր
 իրականացումից, եւ թէպէս Ա. մարշալայի ցոյցին հետեւե-
 ցին մի շարք նման ցոյցեր գաւառներում ամենքի հա-
 վար անկերու էր, որ կառավարութիւնը չը պիտի զիջեր
 մի քանի անսնեակ ատրձանակների առջև, թայց շուտով
 վրայ հասան զէպերը, որոնք մեկէն ի մեկ փոխեցին
 մտքերն ու արմատը թիւնն զորքը Պետերբուրգում տեղի
 տեղեցաւ Գուպոնի ապառնորդութեամբ յայտնի ցոյցը
 յորան յաջորդեց առաջին ընդհանուր գործադուլը
 Կոստանտնուպոլսի անուամբ էր աստանակը, ապա զիմեց
 զիշունների, որոնց իսկական նպատակն էր հանգստացնել
 ժողովուրդը և սպասել մինչև պատերազմի փախձանը
 եւ թէպէս այդ զիշունները ոչ ոք չէր հանգստացրին,
 այնուամենայնիւ նրանք շատ շնորհակալ պատրաստ էին
 գուցէ հարաւոր էր կացութիւնը բարւոքել աւլ անոնց
 զինած կուսակցի Այդ նշանաբանը որ գալիս էր բուր-

ժական շրջաններից մասը գործեց և լեհ Սոցիալիստ
 կուսակցութեան մէջ և շուտով ընդունեց մեր կուսակ-
 ցական ինտելիգենցիայի մեծամասնութեան կողմից Այդ
 բանին նպատեց թարմ ուժերի հակայական ներհա-
 սանքը, ուժերի որոնք ծանօթ չէին կուսակցութեան
 աւանդութիւնների հետ Այդ մարդկանց թուով էր թէ
 էթէ հրաժարելիք լեհաստանի անկախութեան պա-
 հանջից կրտսանք առանց մեծ գոտարութիւնների
 քաղաքական ազատութիւն շարժանքով զմիջոցս
 կուսակցութեան մէջ կատարեց յեղաշրջումը նոր
 մարդիկ գլուխ կանգնեցին նրան, անկախութեան նշա-
 նաբանը փոխարինեց Ասկանայի ժողովի պահանջով,
 որ յետագայում պիտի վերածէր մի աւելի հասնող
 պահանջի լեհական թագաւորութեան ինքնօրինութեան
 (ավտոսովիա) զմիջոցս որքանս որ զմիջոցս մեծ
 Արտամանակ կուսակցութեան մէջ սկսեցին մղել
 ետանդով պրոպագանդ ընդդէմ զինւած պպտարութեան
 գաղափարին նրան ընդդիմադրուով էին ընդհանուր
 գործադուլները ցոյցերը և այլն Այդ կերպը շարունակեց
 գրեթէ մինչև 1905-ի վերջը նա յետոյ ևս չը դա-
 զարեց չը նայած կուսակցական Կարտական
 Կարգ մահեցաւ թէ ան առաջ գալուս Բայց այդ
 կազմակերպութիւնը ևս ստեղծեց միայն այն ժամա-
 նակի երբ իրքը մտնում էր յեղափոխութեան հաղ-
 լեյարգարութեան (լիկվիդացիայի) ժամը Կարտական
 կազմակերպութեան մէջ մտաւ մեծամասնութիւնը այն
 ընկերների որոնք մտնում էին կողմակից լեհաստանի
 անկախութեան Կնացածները հեռացեցին գործերից
 կամ զրկեցին ազգեցութիւնից զմիջոցս որքանս որ
 Այդպիսով մեր կուսակցութիւնը պատիժ կրեց նոր
 համար, որ նախօրոք չէր կարողացել պատրաստել անց-
 քերին զիմաւորելու հարկաւ, ոչ որի չի կարելի մե-
 զագրել կատարածի համար իմ ամբողջ տեսութիւնից
 երևում է որ կուսակցութեան մէջ տեղի ունեցած
 փոփոխութիւնների պատճառը ձախող պայմաններն են
 եւ էթէ մենք այդպէս ծանրանում ենք մեր պատու-
 թեան այդ շրջանի վրայ չենք անում այդ որևէ մեկ
 մեղադրելու նպատակով, այլ միայն դասեր քաղելու
 ապագայի համար զմիջոցս որքանս որ զմիջոցս
 Այնուամենայնիւ ինչպէս ասացի յամբողջ կուսակ-
 ցութիւնը չը հրաժարեց նախկին ծրագրից և անկա-
 խութեան կողմակիցների մեծամասնութիւնը կենտրո-
 նացաւ Կարտական կազմակերպութեան մէջ Թէև այդ
 կազմակերպութիւնը երբեք չը վայելեց Բանուրակի
 Կենտրոնական կոմիտեի համակրութիւնը այնուամե-
 նայնի, արագ-արագ աճեց, զարգացաւ և նրան փոխ-
 ւած էր վերածննցնել կուսակցութիւնը ճիշտ է այն
 կազմակերպութիւնը շարեց այն ինչ որ սպասելի էր
 նրանից լեհաստանը ոչ միայն փորձ ցարեց ազատ-
 գրելու ցարիզմի բանաւոր լիցի, այլ և առ հասարակ

կան Լեհաստանում, ուր ստիկանութիւնը շարունակ
 նակ գործի վրայ է, ուր շարունակ խուզարկում են,
 ձերբակալում մարդկանց հետ գաղտնի սպարանները,
 ստեղծողները, ձեռագրիները, Միշտ, սակայն, ձերբակալ-
 ւածներին տեղ նորերն են երևան գալիս, նոր մեքե-
 նաներ ու գրաշարներ, նոր խմբագրիներ ու ցրտիչներ
 են այդպէս երկար տարիներ անշուք յայտնի է մեր
 «Գրոշակ»ը, որ բոլոր հայ յեղափոխական օրգանների
 մէջ միակն էր «երկրի» մէջ սպագրւած, իրեն «ստոր-
 երկրեայ» հրատարակութիւն, շատ կարճ կեանք ունե-
 ցաւ առաջին համարից ու մի երկու թուոցիկից յետոյ,
 սպարանը մատնեց և թերթը վտարանդի եղաւ. անց-
 նելով դէպի Ռուսաստան, այնտեղից՝ Ժընէվ (քան տարի
 սրանից առաջ)։

Լեհ միջավայրը շատ աւելի նպաստաւոր յայտնեց
 գաղտնի ձեռնարկների համար — և այսօր ահա մեր
 առջև է դրւած P. P. S-ի դաւադրական օրգանի
 ՁԵԼ-րդ փառահեղ, յօրեղեմնական համարը, որ տա-
 կաւին շարունակում է Լեհաստանի ստեղծող, խոր-
 հրդանոր մի անկիւնում, Անունն է՝ «Աշխատաւոր»,
 «Robotnik», «Organ Polskiej Partji Socjalistycznej»
 Եօրեղեմնական այդ համարի մէջ մասնակցում են
 իրենց ողջօնի նամակներով Ամսիլը և այլ անունս,
 քարտուղարը Միջազգային Սոց. Բիւրօի, Եւրմար Բրան-
 ախիւնգ, շվեդական սօցիալիստների պարբերականը հա-
 տանսոն, Աերնօվ, Ռուբանօվիչ, ռուս սօցիալիստ յեղա-
 փոխականների կողմից և «Գրոշակ»ի խմբագրութիւնը
 «Գրոշակ»ի նամակի վրայ առանձնապէս ծանրանում
 է «Robotnik»ի խմբագրութիւնը, յիշեցնելով Լեհ սօ-
 ցիալիստներին ու յեղափոխականներին «Դաշնակցու-
 թեան» արժեքը և այն մտերիմ, բարեկամական կա-
 պերը, որ գոյութիւն ունին Լեհ և հայ յեղափոխական
 կուսակցութիւնների միջև։

սրտի մխիթարանք, յետագայում քիչ մնաց, որ իրակա-
 նութիւն դառնային, մասնաժամանակաբար ցոյց տալիս
 Պարզ է, որ եքս ԷաՏը Օպեսայում պարապ նպաստ
 չի եղել, որ նա կարծի գործունէութեան և ներս յա-
 բարբուրութեան մէջ է եղել յետագէմ ատարներին և
 կիսավայրենի ցեղերի հետ։ Պարսից սահմանագրական
 կառավարութիւնը այդ քանին լաւատեղեակ էր, ինչպէս
 ցոյց են տալիս ռուս անգլիական դեսպանատներին ներ-
 կայացած բողոքները, դրանով հանդերձ փոխանակ ի մի
 ամփոփելու երկրի լուսագոյն ուժերը, իրենց պարապ-
 մենտական ագիտութեամբ, ապիկար կարիներաների շա-
 րունակական փոփոխութեամբ, քաղաքական կուսակցու-
 թիւնների մէջ տիրող թաշտայականութեամբ, մի կօսքով
 երկրի շահը անձնականին զոհարեցնելով, ստեղծել էին
 մի այնպիսի անիշխանութիւն, որից բնականաբար պիտի
 օգտուէր նախկին ԷաՏը իր մտադրութեանց գործագրու-
 թեան համար Զպէտք է մտանալ նաև այն հանգա-
 մանքը, որ եթէ այդպիսի թուլամորթ ու վախկոտ մի
 անձնաւորութիւն, որը թուում է թէ չպիտի մոռացան
 ինէր յեղափոխական բանակի ռուսներն ու կախաղանի
 վրայ ձօժուղ իր համախոհների դիակները՝ չպիտի հա-
 մարձակէր այդպիսի վտանգաւոր քայլ անել, քանից
 արտաքին «պահպանութեան» ու ճիւղաբաժնի սոցիալ

Ռուս կառավարութեան հաւաստիացումները, թէ իբր
 նա տեղեկութիւն չի ունեցել եքս ԷաՏի գաղտնի մտա-
 դրութիւններէ մասին և անգլիական յայտարարու-
 թիւնները իր չեզոքութեան մասին, մեր աչքերին նետած
 ոսկէ փոշիներն են։ Եւստի քիչ յամայնապէս ցոյց
 տնենք երկու պատերազմող կողմերի ուժերը Թողո-
 վուրդը մասսան գրեթէ անտարբեր է, նա սովորել է
 անմտունջ ճնշել ու կեղծել երկու ռեժիմի տակ էլ,
 նրա համար միևնոյն է՝ սահմանագրութիւնն է յաղ-
 թելու, թէ եքս ԷաՏը նա սովորել է վիզը ծուել ուժի
 առջև և գրկաբաց ընդունել նրան Եքս ԷաՏի և Սա-
 լարդօվիէի յառաջխաղացումը արդէն ցոյց է տալի այդ
 խիստ իրողութիւնը։ Եւստի քիչ յամայնապէս ցոյց
 տնենք կառավարութիւնը ունէր իր արամագրութեան տակ
 նորակազմ ռեժիմաները, որ պատերազմող ուժ չեն
 ներկայացնում, թնդանօթաձիգներն ու Ամիէ Զիւաւոր-
 ները, որոնք միջակ ուժ են, կօզակների քրիկատը, որոնց
 վրայ երբէք չի կարելի վստահել և կռիւ ուղարկել և
 բախտիարի ձիւաւորները, որոնք հայերից կազմեցիք մար-
 տական խմբերի հետ կառավարութեան միակ յոյն ար-
 ապաւենն էին ներկայացնում։ Եւստի քիչ յամայնապէս
 ցոյց տնենք Բախտարներն ամենայն արագութեամբ արձագանք
 տալին կառավարութեան կողմից զոյգաբար ցոյց տնենք
 Այդ ուժերի վրայ պիտի աւելացնել կառավարու-
 թեան մեծաբանակ արագհարածեան թնդանօթները,
 վերջին սխտեմի հրացանները և առաջ դաշմամթերքը,
 նաև այն բարեկամեց հանգամանքը՝ որ ֆինանսները

Պ Ա Ր Ս Կ Ա Ս Տ Ա Ն

ՎԵՐԳԻՆ ՑԱՐԿԱՅ ԻՎԱՅԱՍՏՐՆԵՐԸ

ԵՒ

“ԳԱՅՆԱԿՑՈՒԹԵԱՆ” ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

(ՆԱՄԱԿ ԳԱՐՍԿԱՍՏԱՆԵՑ)

1909 թ.ին, երբ գահազուրկ արքան ռուս դեսպա-
 նատան ամբողջացրեց կառք եր նստում դէպի իր ար-
 տրամայրը, մեկնելիս յայտնել էր իր շրջապատին, թէ
 ինչպիսինքս իրենց թրի ուժով են արիւել երկրին, ես էլ
 իմ թրի ուժով պիտի վերադառնամ կրկին տիրելու
 իմ գահին։

Այս խօսքերը, որ այն ժամանակ թուում էին այնպէս

Իմամզատեճաֆերում սկսել էր արդէն Արշադը-Դօվլի և Ջերդամը Սայթանայի միջև՝ վճռական է դառնում, երբ հասնում են Թեհրանից գնացած գնդերը. թշնամին երբ կողմից շրջապատւած, լքում է կուրի դաշտը և փախում: Ինքը Արշադը-Դօվլեն վիրաւորւած բռնուած է, մեծ թւով սպանւած, վիրաւոր և գերի տալով գերի են ընկնում նրա 3 թնդանօթները, ռազմամթերքը, մեծ քանակութեամբ հրացան և կանխիկ զրամս Իրեն հարցքներուց յետոյ, Թեհրանից ստացւած հրահանգների համաձայն, Եփրեմը տեղն ու տեղը գնդակահարել է տալիս նրան ու վերադառնում մայրաքաղաք:

Արշադը-Դօվլի պարտութեամբ արդէն Մազանդան-Խորասանի կողմում Մահմեդ Ալիի ուժերը գրեթէ խալա խորտակւած էին:

Բռնապետութեան սիւներից մէկն էլ ընկնում է յանձին Նայիպ Լուսէյն Բաշուն. նա Հերէնդի շրջանն ակրելուց յետոյ, առաջացել էր դէպի Քաշան, բայց իրաւ-Սուլթան բախտիարցին նրա առաջն կորում է և Իմամզատե Ապուզէյտում նրան շրջապատում: Ծերունի աւագակապետը զիմագրութիւնն անօգուտ տեսնելով անձնատուր է լինում և ձերբակալուած:

Հուսով հրապարակ եկան Սալար Դովլէն, Սուլայ Դօվլէն և մի շարք Նայիբ Լուսէյններ ու գրանջ նման անձնաւորութիւններ, որոնք իրենց շուրջը հաւաքելով խառնակիչների ու թալանիչների խմբակներ, հակակառավարչական գործողութիւններ էին սկսել այս ու այն կողմում:

Կառավարութիւնը, որ բաւականաչափ ուժ չունէր բոլոր ուղղութիւնների վրայ արշաւելու, կենտրոնացրեց իր ուշադրութիւնը Մահմեդ Ալիի դէմ: Սրան ի հանդէպ ուղարկած բանակը ուներ իբրև անւանական հրամանատար Սալար-Քաթէն, բայց իսկական հրամանատարը մեր ընկեր Ասլանն էր, որ կարողացել էր գրաւել ու խաղաղացնել ամբողջ Մազանդարանը: Ելել էր միապետականներից Բաշֆուշն ու Սարին և Մահմեդ Ալիին փախցրել էր Գիւմուշթափա, որ ռուսական սահմանագիծի վրայ է ընկած:

Արասնօփօզսկիյից մը նաև էր ձանապարհւել դէպի այդ կողմը, Մահմեդ Ալիի արամագրութեան տակ զԸՐ-ւելու համար:

Մազանդարանը կարճ միջոցում այն աստիճան խախտաղացրեց, որ կառավարութիւնը յետ կանչեց դաշնակցական անւան տակ կառող մարտիկներին և մի խումբ ժանդարմների՝ ուրիշ տեղ ուղարկելու նպատակով:

Այժմ գառնանք Սուլայ Դովլէն էին և Թաւրիզի դէպքերին: Ինչպէս յայտնի է, կառավարութեան դէմ ապստամբողներից մէկը և թերևս ուժեղագոյնը այդ անձն էր: Թաւրիզի Անջումանը հեռագրում է կենտրոնական կառավարութեան, որ օգնութիւն հասցնել, յապակտ իրենք ոչինչ անել չեն կարող: Այդ հեռագրից

պարզուած է, որ ժողովրդականներից սպանւած է Ծ հոգի, իսկ հակառակորդներից 20-ից աւելի վիրաւորներ: Թաւրիզում պաշարի մեծ պակասութիւն կար. թշնամին շարունակում էր պաշարել քաղաքը և պատրաստութիւն էր տեսնում ամեն կողմից յարձակելու նրա վրայ:

Կառավարութեան ուժը փոքրիկ էր. նա իր ամբողջ ուշադրութիւնը դարձրել էր քաղաքի ինքն ապաշտպանութեան վրայ: Թաւրիզի շուրջը զիրքեր էին պահում դաշնակցականները:

Կացութիւնը սկսեց լաւանալ և յոյսեր ներշնչել, երբ քաղաքի բոլոր ուժերի հրամանատար Նշանակեց Թեհրանից ընկեր Դուլամանը: Նրան էին ներկայացրւած հայ ու թիւրք բոլոր խմբապետները և յանձնած թնդանօթները: Ընկերը կարողացաւ իր շուրջը հաւաքել դաշնակցական մարտիկներից մի սոււար բազմութիւն:

Ռուս կառավարութիւնը, որ վաղուց ի վեր սովորութիւն էր արել պարսից բոլոր գործերում միջամտել, մէկէն ի մեկ յայտարարեց, որ նա թոյլ կը տայ կառավարչականներին՝ Թաւրիզից միայն 35 բիլոմետրի վրայ կուր մղել: Այդ յայտարարութեան հետևանքը ահա թէ ինչ եղաւ:

Օգոստոսի 20-ին Ազի կամուրջի վրայով մի խումբ ձիաւորներ ուզում են քաղաք մտնել: Քաղաքից իրենց առաջն են ուղարկում ժանդարմների մի խումբ: Լազիւ մի քանի գնդակ արձակած՝ ռուս կողակները գալիս են կուր վայրը և ուզում են ձերբակալել ժանդարմներին: Ընդհարման ժամանակ վիրաւորուած է մի օֆիցեր, Գումի անունով: Ժանդարմներից յաջողուած է ձերբակալել 4 հոգու, որոնց հիւպատոսարան տանելուց յետոյ փոխադրում են ռուսաց բանակը և բանտարկում: Իր այդ քայլը ռուս կառավարութիւնը բացատրում է նրանով որ կուրը 35 բիլոմետրից մօտիկ տարածութեան վրայ է եղել:

Սեպտեմբերի 6-ին Ռուքա Դօվլէն մեծ ուժով Սաւրիդ-Ալէից և Շահ-Ջաղանից յարձակում գործեց Թաւրիզի վրայ: Առիւր 7 ժամ տւեց. Սուլայ Դօվլէն մեծ ջարդ կերաւ և յետ նահանջեց:

Գալով Սալար Դօվլին, նա Սուլթանաբաւ էր, իսկ նրա մարդիկ Լամադանը գրաւելուց յետոյ՝ այնտեղի և Ղազրինի մէջ եղած ձանապարհներն էին թալանում: Կառավարութիւնը իր ուժերը կենտրոնացրեց նրա դէմ. կառավարական զօրքերը այլևայլ ուղղութիւններով առաջ գնացին, թշնամուն ամեն կողմից պաշարելու համար: Բաւական թւով մուշահիդներ և բախտիարցիներ գնացին: Մեր մարտիկներից գնացած են Սիմօնի, Արշադի և Շերամի խմբերը (75 հոգի) և Իւանի գընդակացիներն ու խումբը (14 հոգի): Ապա գնացին Քեռին ու Եփրեմը իրենց տղաներով:

Աւելորդ չի լինի տեղեկացնել ձեզ և այն դէպքերի մասին, որոնք պարզում են ուսուցանողականութեան դէպի դաշնակցականներն ունեցած բաղադրականութիւնը:

Ամենից առաջ մեր դահլիճները սկսեցին Լ: Ն զ Է Լ Ի յ ի ց: Ռաշտի հիւպատոսի հրամանով Էնզէլիի ագենտը ձերբակալում է Արշակ Սարուսեանին, որ տարիներ առաջ այնտեղ է եկել և յայտնի է իբրև պարսկահասպատակ: Նա զինւորագրութիւնից փախած է: Նրան արդէն Վովկաս են զրկել: Ուրիշ 4 հոգու էլ կանչել է ու խիստ նկատողութիւն արել, որ նրանք յաճախել էին այնտեղ մեր ընկերոջ դասախօսութիւնները և առհասարակ մասնակցել են պարսկական շարժումներին կամ անդամակցել են Լ. Յ. Գաշնակցութեան:

Բէնդերգազից էլ հեռագրում էին մեզ, որ այնտեղ էլ մեր ուսուցանողական ընկերներից ձերբակալածներ կան: Ռուսաց դեսպանատան պաշտօնեան պահանջում է արտաքին գործոց նախարարից յանձնելու նրան «Վրասնօգոս» պատերազմական նաւի նաւաստիներից մէկին, որ փախել է մի ինչ որ յեղափոխական Սուրէնի հետ: Հակառակ դէպքում սպառնում է ձերբակալել այնտեղի դատաւորին և դաշնակցական ընկերներին:

Նաւաստին Ղազարիից դէպի Թեհրան ճանապարհին ձերբակալում են, իսկ Սուրէնի մասին յայտնի չէ դեռ:

Սեպտեմբերի 2-ին ուսուցող հիւպատոսարանից մարդ են զրկում Հայկ Տէր Օհանեանի ետեից և կանչում նոյն գործի համար: Երբ սա ներկայանում է, ձերբակալում են: Պատճառը նրա ուսական թերթերին տւած ճիշտ տեղեկութիւններն են: Նրա բռնելուց յետոյ Եփրեմը հեռագրում է Ցարգովին (ուսական մայրաքաղաքի թերթերի աշխատակից է, այստեղ եղած): «Հայկը ձերբակալած է, թերթերին ճիշտ տեղեկութիւն հաղորդելու համար»: Գրա վրայ ձերբակալածին ազատ են արձակում:

Հ Ա Ս Ա Ր Ա Կ Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն

ՊԵՏՐ ԼԱՎՐՈՎԻ ՊԱՏՄԱՓԻԼՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ

Ն Ե Ր Ա Յ Ո Ւ Ք Ն Ա Ն Տ Ե Ղ

Ընդամենը 12 տարի է բաժանում մեզ ուսուցողական մտաւորականութեան այն հոյակապ դէմքից *), որին իր երախտագէտ հայրենակիցները դեռ պայքարի օրերին «մեր ժամանակների ունիվերսալ զլոխը» արտղոսին են արժանացրել:

Պատմական կորովի մի դէմքի հասարակական նշանակութիւնը, նրա ամբողջական գնահատումը տալու համար անցած մի տասնամեակը առհասարակ շատ կարճ

ժամանակամիջոց է: Իսկ երբ հարցը Պ. Լավրովի նման անձնաւորութիւններին է վերաբերում, որոնք ամբողջ սերունդների տարածութեան վրայ, մի մտաւորականութեան լուսագոյն և ամենազգայուն մասը իրենց ուժեղ մտքի և անհատականութեան թովքին են ենթարկել, — ապա այդչափ կարճ ժամանակամիջոցները կորցնում են անգամ իրենց համեմատական արժէքը: Այսօր մենք ճգնում ենք դեռ իրականացնելու այն, ինչ այնքան հետևողականօրէն և աննկունութեամբ բարոզել է մեծ ուսուցիչը: Եւ այդ ոչ միայն խօսքով ու գրչով, այլ և գործով, կենդանի օրինակով: Ասէք այսօր մեզ հեռ է դեռ կենդանի մարդը իր անհատականութեան ամբողջ հմայքով, իր կարող մտքով ու կամքով: Ասէք նրա հեռ միասին դեռ նոյն օդն ենք շնչում, մնում ենք նոյն զգացումներով, խորհում ու մտորում ենք այնպէս, ինչպէս նա է խորհել և մտորել:

Յաճախակի դիտւած երևոյթ է, որ շատ հասարակական խոշոր դէմքեր, պատմական թատերաբեմից յետ քաշելուց յետոյ դադարում են այլ ևս ժամանակակիցների յիշողութեան մէջ ապրելուց: Նրանց կողմից համարեա թէ մոռացութեան են տրուած: Որ նոյնքան յաճախ դիտւած է նաև տրամագծօրէն հակառակ երևոյթը, — դրանով միայն հասարակական մի շարք եղելութիւնների գոնէ առերևոյթ հակասական լինելն է փաստւում և ոչ առաջինը ժխտւում:

Կայ հասկանալին, բացատրելին: Բայց կայ նաև անբացատրելին, առեղծւածայինը, յամենայն դէպս թւաբանական հաշիւներից խուսափող՝ այդ օրինակ երևոյթների մէջ:

Պատմահասարակական խոշոր դէմքը ապրել, մտածել, զգացել է հասարակական, պատմական այրող պրօբլեմներով, այդ պրօբլեմների համար: Գրանց որոշակի, վերլուծական և նպատակայարմար լուծուած նրա որոնող մտալրացումների մշտական նիւթն է եղել: Նա իր կամեցողութիւններով, գործողութիւններով և մտորումներով հասարակական պիտանի ուժերն է մղել դէպի այդ լուծուածը: Նա իր անհատական ուժի ամբողջ հեղինակութեամբ — շատ անգամ ընդունողների կողմից նոյնիպէն աննկատելի — ստիպել է հասարակական ոչ սակաւութեան հատներին և գրուպաներին (խմբումն) մտածել այնպէս, ինչպէս ինքն է մտածել, զգալ և կամենալ այնպէս, ինչպէս ինքն է զգում և կամենում: Անհատական մտածողութիւնը հասարակական կամ գրուպային մտածողութեան արժէքն է ստանում: Անհատական զգացողութիւնը դառնում է հասարակական կամ գրուպային զգացողութիւն: Անհատական կամքը, վերջապէս, հասարակութեան հեղինակաւոր ներագործումն է ստանում, — յաճախ լռելեայն, ի հարկէ:

Գալիս է վայրկեանը, երբ անհատը «դիմազրկւում» է: Բայց դա թուում է միայն մոռացումը սոսկ ձևական է:

* Նուշակաւոր ուսուցող Սոյիալիստ-մտածողը վախճանւեց 1900 թ. փետրւարին Պարիզում, արտորի մէջ. Ծ. Խ.

անհատը գիմաթոզ չէ լինում, նա չէ կորցնում իր անհատական մեծութիւնը, այլ հասարակութեանը, գրույաներին է բարձրացնում կամ մտեցնում իրեն, իր թովիչ անհատականութեան բարձրացնում ու մտեցնում է գէթ նրանց ընդհանուր տրամագրութիւնները պատմահասարակական խոշոր դէմքը չէ մոռացում իրօքնա մոռացում է և միայն (երևութական մոռացութիւն), որովհետև նա լուծւում է իր անհատականութեամբ հասարակութեան ամենազգայուն, ապա ուրեմն և լաւագոյն մասի գիտակցութեան մէջ. և թե՛մ է այնտեղ պահւած, անկատելի: Պոռացում է՝ որովհետև հասարակութեան այս կամ այն մասը կրում է նրան իր մէջ, որովհետև «ժամանակներն» են կրում նրան իրենց արգանդում:

Եւ որքան աւելի տեղական են սօցիալ-պատմական այն պայմանները, որոնց մէջ շնչել ու գործել է պատմական դէմքը, որքան աւելի սերտորէն է կապել նա իր շրջապատի հետ և որքան աւելի զօրեղ է եղել նրա զգեցութիւնը իր միջավայրի վրայ, այնքան ևս մեծ է ապրել-մոռացելու՝ վտանգը, այնքան ևս հեռու է այն վայրկեանը, երբ պատմահասարակական դէմքը որոշակի գծերով կըսկսէ բիրեղանալ հասարակութեան «խիշոկութեան» մէջ, կ'անցնի, ուրիշ խօսքով, պատմութեան գիրկը:

Այդ վայրկեանին է, որ պատմաբանի զգուշաւոր ձեռքը առանց վարանելու կը թափախէ իր գրիչը պատմական դէմքի իրական գնահատման առաջին էջը բանալու համար:

Լավրովի վերաբերմամբ՝ այդ վայրկեանը, դժբախտաբար, դեռ չէ հասած, որովհետև ուսական հասարակական կեանքը Լավրովի վարդապետածից միայն ընչին բեկորներ, համարեա ոչինչ է իրականացրել տակաւին:

Մեր մատնանշած հասարակական-հոգեբանական ուշագրաւ երևոյթը հազարաւոր դէպքերով է յայտնի մարդկային պատմութեան մէջ, Նման երևոյթ տեղի ունի և ոչ միայն հասարակական պայքարի թատերաբեմում անմիջական հարւածներ տուող և ստացող կուստենչ հոգիների հետ, այլ և փիլիսոփաների:

Գերմանական, գուցէ և բոլոր ժողովուրդների ու ժամանակների խոշորագոյն մտածող Կանտը, մոռացւած էր իր հայրենիքի մէջ մի այնպիսի շրջանում, երբ գերման կրթւած հասարակութիւնը անգիտակցօրէն նրա գաւանած բարոյագիտութեան շնչով էր ապրում. երբ գերմանական բարոյա-իմաստասիրական գրականութիւնը մեծ փիլիսոփայի մտքերի բեկորներովն էր կերակրւում: Նման երևոյթ՝ Ֆրանսիայում:

Վոլտերիօյն, Ռուսսօյն և Վօլտերին Ֆրանսիական ժողովուրդը բիչ, շատ բիչ էր կարդացել մինչ-յեղափոխական շրջանում: Բայց ժամանակակից գրական և պատմական երկերը ցոյց են տալիս, և ականատեսները

վկայում են, որ Մեծ Եղբայրութեան նախօրեակին դժուար էր գտնել Ֆրանսիայում նօրմալ մէկին, որը իր սովորական արտայայտութիւնների մէջ չմերկացներ մի կտոր Ռուսսօ, Վօլտեր կամ Մօնտէսքիօ:

Ֆրանսական ժողովուրդը, անշուշտ, միջականօրէն իր գիտակցութեան մէջ էր առել այդ մեծ դէմքերի վարդապետածները:

La contagion! La fascination! — Վարակում, Թուփում, կ'ասէր, հարկաւ, Գիւստապ Լըճիօն:

L'imitation! — Ընդօրինակում, կը պնդէր Թերես Գ. Տարգրի Գուցէ և ամեն մէկը մի որոշ իրաւունքով. բայց ոչ միակ և ոչ ամբողջական իրաւունքով: Պակասում է արիւմեզիան յենակէտը՝ երևոյթը իր պատմա-հասարակական ամբողջ բովանդակութեամբ և հոգեբանութեամբ վերցնելու համար, Նմանօրինակ չափազանց շատ պարագաներում այդպիսի մի յենակէտ կամ գոյութիւն չունի պատմահասարակական դէմքերի և դէպքերի գնահատման համար. կամ գոյութիւն ունին միաժամանակ մի քանիսը. և կամ իբրև միակը գտնւած վայրկեանին գնահատուող դէմքն ու դէպքը այնքան հեռացած են մեզնից, որ ժամանակի և տարածութեան թանձր քօղը անմատչելի է դարձնում մեզ կատարածի կամ եղածի իրական վիճակը:

Բացարձակ «առարկայական» վելաբերումը, որ հնարաւոր պիտի լինէր գնահատողի և գնահատուողի հեռաւորութեան պատճառով, յաճախ բերում է իր հետ անհրաժեշտօրէն նաև կիսատ վերաբերումի հնարաւորութիւնը. այո, համարեա անխուսափելիութիւնը:

Թերես մի խոշոր մասով նման հիմք ունի յայտնի մոլորութիւնը, թէ՛ «մեծ ժամանակները իրենց մեծ մարդկանցն են ծնում»:

Իր ընդ մեծ ժամանակի՝ և մեծ մարդու կամ մարդկանց զուգադիպման դէպքում շատ աւելի դիւրին է, և՛ քաղաքական գնահատողների համար և՛ կօնկրեա ու գոհացուցիչ ժամանակակիցների բաղմութեան աչքում, «մեծ ժամանակների» լայն հիմքի վրայ սեղմ անհատին կանգնեցնելու, քան վերջինիս վրայ առաջինները: Շատ աւելի դիւրին է որոշ անհատին անորոշ «մեծ ժամանակների» հետեանք համարել, քան թէ անհատին կամ անհատներին վերջիններիս պատճառ: Բայց ինչ որ դիւրին է և առաջին իսկ բոլորից կօնկրեա երևացող՝ դեռ ևս իրականն ու իրաւացին չէ: Ընդհակառակը: Երբ հարցը հասարակական և անհատական հոգեբանութեան հետ խճողւած բարդ երևոյթներին է վերաբերում, հիմք կայ ենթադրելու, որ հեշտ և կօնկրեա երևացող մի «փոքրիկ» դէպք զուգորդւած է մշտապէս մի շատ խոշոր մոլորութեան հետ: Այդ երևոյթների մի խորունկ հոգեբանական և հասարակագիտական վերլուծութիւնն ցոյց կը տար և ցոյց է տուել:

որ յաճախ հակառակն է ճշմարիտ. որ յժամանակները փոքր են, որովհետև շունին իրենց մեծ մարդիկը՝ Այդպիսի մի վերլուծութեան առաջին քայլը դեռ չաբած՝ մեզ իսկոյն կը գտնէինք, օրինակ, նման հարցերի դիմաց:

Ռուսական յմեծ ժամանակները՝ արդեօք ծնեցին Լէրցէներին, Չերնիշևսկիներին, Սալտիկովներին, Լափրովներին, Բելինսկուն, Դորբուլէբովին և այլն, թէ՞ դրանք ստեղծեցին յմեծ ժամանակները՝ ստեղծեցին, ի հարկե, ոչ ոչնչից: Արդեօք Ռուսսօն, Վալտերը, Մօնտէսքիօն էի՞ն, որ դրին Փրանսիական յմեծ ժամանակներին՝ սկիզբը, կամ գոնէ մեծ չափով նպաստեցին դրան, — թէ՞ այդ փայլուն դէմքերը դադարեցին այլևս արտադրելուց, հէնց որ Փրանսիական յժամանակները՝ թօթափեցին իրենցից յմեծութեան՝ ծիրանին:

Այլ հարցումն, Լուդվիգ Բիօնենները, Կայնէները, յներխաասարդ գերմանիայի՝ փայլուն պլեադն էր արդեօք, որ բերեց *Strum und Drang*, թէ՞ գերմանական յժամանակները՝ իրենք իրենց պէտք է արգէն փոթորկէին, եթէ անգամ գերմանացի մայրերը փոթորկոտ հոգիներ չծնէին:

Բայց յմեծ ժամանակներին՝ հակադրում են յաճախ յփոքրիկ ժամանակները՝:

Եւ կրկին՝ Սակա՛ն են փոքր երևացող այնպիսի ժամանակներ, որ յմեծ՝ լինելու մէկից աւելի հնարաւորութիւն ունին իրենց ծոցում, սակայն մեռւմ են յփոքրիկ՝, որովհետև դեռ չկան, դեռ թաղնւած են նրանց մեծ դարձնող դէմքերը:

Ե՛րբ, ո՞ր դարում, ո՞ր ժողովրդի մօտ աւելի շատ տրտուներ են բարձրացել սերնդի մանրացման առթիւ, բան մեր ժամանակում:

Նորից հարց է իրօք սերունդն է մանրացած. արդեօք ժամանակները կամ մայրերն են ամպցել այլևս յմեծեր՝ չեն ծնում: Թէ՞ այդ յմեծերը՝ այնչափ շատ են, որ մէկը կամ երկուսը անհատօրէն չեն կերպաւորւում հասարակական ֆօնի վրայ: Թէ՞ անհատի հանդեպ ջրած պրօքլեմները իրենց հսկայական և բազմակողմանի լինելուն պատճառով՝ այդ անհատի յմեծութիւնն՝ են նսեմացնում: Թէ՞ գուցէ նախկին ժամանակները բաժան-բաժան չ'անելով անհատի հոգեկան կարողութիւնները, կենտրոնացնելով նրանց համեմատաբար սակաւթիւ ու միակողմանի պրօքլեմների շուրջը, հնարաւորութիւն են ընձեռել նաև աւելի մեծութեամբ երևան քայլու:

Կամ գո՛ւցէ այն պատճառով, որ յմեծ՝ տիպոս կրող ետիւններ մի խոշոր մասամբ ուրիշ բան չէ, բայց եթէ յանանուն հերոսների՝ հմայքը, հերոսներ, որ ամեն տեղ են, ամեն ժողովրդի մէջ, ամեն դարում: Մի տեղ աւելի, մի այլ տեղ պակաս:

Մի վայալինգ, մի Լասսալ, մի Լիբկնեխա, մի Բէրէլ

մեծ հոգիներ են, անշուշտ. մեծ՝ թէկուզ հէնց միայն իրենց իդէալների անաղարտութեամբ, դրանց աննկուն, մոլեռանդ հետապնդումով և փոթորկոտ հոգիներու Լեւաւա՛ք են դրանք իրենց ժամանակի մեծ շարժումներին, թէ՞ այդ շարժումները իրենց մեծութեան մի խոշոր մասը պարտական լինելով նման նախորդներին, աւելի ևս մեծանում են դրանց անմիջական մասնակցութեամբ: Բարեօֆ, Պրուդօն, Լուի Բլան, Ժօրէս, սրանք ևս խոշոր են ոմանք իրենց հոյակապ յղացումներով, ուրիշներ իրենց կամքով, մարտական խառնածքով:

Ո՞վ կարող է լուսաբանել նոյնիսկ չափազանց անհատական, ուստի և նւազ անհասապաշտ գերմանացիների խոշոր սօցիալական շարժումը՝ առանց ծանրանալու Լասսալների, Բէրէլների, Լիբկնեխտների վրայ: Ծայրայեղ դօգմայնութիւնն իսկ՝ ինքզինքը թերի է ցոյց աւել այդ լուսաբանութեան մէջ:

Ո՞վ կարող է առանց դօգմային մտածողութեանը զօ՛ււելու, բացատրել անհասապաշտ և նւազ անհատական Փրանսիացիների սօցիալիստական շարժման ուժն ու ծաւալը, առաքինութիւններն ու սխալանքները՝ անհատի հմայքից անջատ ու անկախ:

Վիճելի հարցեր են. մասամբ և վիճւած:

Մի բան պարզ է. Պ. Լափրովը մէկն է այն դէմքերից, որոնք իրենց անհատական ամբողջ թափով, պատմահասարակական գործելով ու հեղինակութեամբ յմեծ ժամանակների՝ արքիօմատիկ երևացող անտութիւնը առնալքը պատմութեան սրբագրական սեղանի առջև են հրաւիրում: Առանց խոշոր գղղղումների ու շշուկների, իր լո՛իկ հմայքով ապրած ու գործած մարդ ապրում է հասարակութեան լաւագոյնների խորքերում, լուծւում է այդ գիտակցութեան մէջ: Եւ յաճախ չափազանց դժուար է նոյնիսկ մի յայտնի վայրկեանում որոշել, թէ որտեղ է վերջանում անհատականը և որտեղից սկզբնւորում հասարակականը, խմբականը մասսայինը:

Լափրովի զարգացման պատմութիւնը իր գործնական հասաւածի մէջ ուսուական իրականութեան պատմութիւնն է. իսկ տեսական աշխարհում՝ մասամբ նաև եւրոպական մտքի զարգացման պատմութիւնը:

Նա ուսուական առաջին, գիտական փիլիսոփան է: Առաջինը գոնէ, որ Արևմուտքում վանտեան և Կոնտեան փիլիսոփայութեան ազդեցութեան տակ սկզբնւորւած հակասուածաբանական և հակաբնազանցական հոսանքը ճշգրտօրէն ըմբռնեց, փիլիսոփայական նոր ուղղութեանը քննադատօրէն հետևեց, մէկ կամ միւս կէտում ինքնուրոյնաբար շեղելով թէ՛ մէկից և թէ՛ միւսից:

Նա ուսուական սուբեկտիվ (ենթակայապաշտ) հասարակագիտութեան՝ կամ ինչպէս Արևմուտքում կո՛ւսուում է — յուսուական սօցիօլօգիայի՝ ականաւոր հիմնադիրներից է. և Միխայլօվսկու, Չերնիշևսկու հետ

Հասարակագիտական այդ գպրոցի տաղանդաւոր հիմնաւորողն ու զարգացնողը

Նա միաժամանակ և մ ա ր դ ա բ ա ն է, խոշոր էրուդիցիայով. համարեա միակը, որ իր մարդաբանական ընդարձակ ծանօթութիւնը այնքան միաձոյլ կերպով շաղկապել է իր ընկերավարական հայեացքներէ հետ:

Նա ուսական պոզիտիվ (գրապաշտ) բարոյագէտն է. ամենկորովին՝ արդի դասակարգային կաւին բարոյագիտական հիմնաւորումն տալու փորձը ձեռնարկողներէց առաջիններէնը:

Նա Ձերնիչեւկու հետ ճ հասարակական ճ մի ամբողջ շրջման պարագլուխն է, զեկամարը, գրեթէ ստեղծողը:

Նա այդ շրջման միջադրային ներկայացուցիչն է 1871-ի Փրանսիայում:

Նա, վերջապէս, Լափրովը եւ Անունն իսկ շաա բան է ասում մեր սրտին և մեր ուղեղին. «Հաննիբալիան երդման» մեծահոգեւորներին, տեւպերամենտով լի երիտասարդ «Երուկը» և «Հաննիբալիան երդման գաղտնի թիւան» վատաբախտ օրերին քչերի՝ հեա իր գրոշակին հաւատարիմ մնացած ծերուկ երիտասարդը:

Քոյորը չեն սրանք, բայց գլխաւորներն են:

Եւ ինչ անել այս ամենը այն դէպքում, երբ մենք նպատակ ենք դրել տալ ընթերցողին մի ներածութիւն գեպի Լափրովը՝ որպէս ամբողջական և գրանխոսայ անհատականութիւն, կը նշանակէր թեքել մեր նպատակից. կը նշանակէր անել անարդարացին՝ ունիվերսալ (հանրագէտ) մտածողի վերաբերմամբ. աւելի ևս, որ մենք պիտի սահմանափակ ինք մի քանի տասնեակ էջերով:

Ինչս կողմից. պոկել Լափրովի անհատականութեան մի մասը և ուշադրութեան առնել սոսկ այդ բաժանել միմեանցից Լափրով-փիլիսոփան, Լափրով-հասարակագէտը և բարոյագէտը, Լափրով-մարդը, կը նշանակէր ոչ միայն հակառակ անարդարութեան մէջն ընկնել, այլ և Լափրովին հականալու, ծանաշելու խնդիրը սկզբից և եթ փխրուն հողի վրայ դնել:

Լափրովը ամբողջական մարդն է. ամբողջական, երբ նա իրաւացի է, բայց ամբողջական նաև, երբ նա առերևոյթ սխալների մէջ է: Որովհետև նա սկզբունքի, դաւանանքի մարդն է: Վաճառ, մարի և գաղափարի մարդը. որոնցից մէկը — վերջինը — հեռանկարներն է որ ազդում նրա առջև. միւսը — միւսը — բովանդակութիւն դնում դրանց մէջ. երրորդը թափով մղում դէպի բրագործում:

Der Wille zur Macht.

Լափրովը՝ դրական, հակամիջեական մարդ՝ այս արտայայտութեան իրականացումն է:

Նրա համար չկայ թեօրիա և պրակտիկա ջոկ-ջոկ. սեսութիւն և գործնականութիւն իրարից անջատ: Նա ինքը ամբողջովին թեօրիայի և պրակտիկայի միացումն է, դրանց խառնուրդը, իրար մէջ լուծումը, մինձեզը:

Անկարելի է մարդաբան, հասարակագէտ, փիլիսոփա, բարոյագէտ կամ սոցիալիստ Լափրովը իրարից պոկել: Առանց գրանխոսայ կերտածի ամբողջականութեան մէջ խոշոր ճեղքածներ առաջացնելու:

Մ ա ր դ ա բ ա ն Լափրովը հեռախոզում է հասարակութեան և անհատների կեանքում ներգոյ հոգեբանական մոմէնտների հիմունքները և ծագման կարգով դրանց իրենց քննախօսական գործունէրին վերածում: Նա աչքի առաջն է բաշում փիլիսոփական և փիլիսոփայական պրոֆէսներն առհասարակ:

Հ ա ս ա ր ա կ ա գ է տ Լափրովը մարդաբան Լափրովին ձեռք ձեռքի՝ բնախօսական հողի վրայ առաջացան հասարակա-անսեսական պահանջների, այդ պահանջներից ծագած հասարակական կերպաւորումների և ընդհանուր հասարակական կազմի կնճիւղներն է բաց անուկ ընկերային համերաշխութեան զարգացման ձևերի պայմաններն է քննում, մէկ կամ միւս մութ անկեան վրայ գիտական հետազոտութեան պայծառ լոյսը թողնելով:

Փ ի լ ի ս ո փ ա - Լափրովը մերթ մարդաբանական և հասարակական հետազոտութիւնների տաճ հետեւանքներից ընդհանուր հիմունքներ է դուրս բերում, մակարդակը ընդլայնում, մերթ նախօրոք կազմած փիլիսոփայական սկզբունքների և ընդհանրացումների համեմատ մարդաբանական և հասարակագիտական անմատչելի դաշտեր գիտական հետազոտութեանը մատչելի դարձնում:

Բ ա ր ո յ ա գ է տ Լափրովը համաձայնեցնում է պատմա-մա-փորձական իրողութիւնները և փիլիսոփայական մտադրացումները (Begriff) գործնական և նպատակայարմար հասարակակենցաղի ու անհատական կեանքի պահանջների հետ: Պատճառների և հետեւանքների արտերային, բնագիտական և պահանջի տեղ նա առաջադրում է նպատակների և միջոցների բարոյագիտական և սոսեղծագործող պահանջը:

Վերջապէս, սոցիալիստ Լափրովը գիտական այդ ընդարձակ զինարաններից վարպետորեն դուրս կորզած գէնքերն է սեղմում աշխատարտների շրուտ բազուկների մէջ, պատմական կաւի յաղթանակի խրախուսանքով նրանց յեղափոխական կորովը հրահրելով:

Ստացւում է մի ուշադրաւ մտականուցեւածք, որտեղ գիտական հետազոտութեան մի բնագաւառը երկու կամ աւելի ծղակներով կապւած է միւսի հետ: որտեղ ոչ մէկը սոսկ պատճառ կամ հետեւանք է, այլ մէկը և միւսը միաժամանակ: որտեղ տարբեր մասերը անքակտելի կապերով ընդգրկում են իրար և առաջ բերում կառուցեւածքի ճարտարաբան ամբողջականութիւնը:

Բարեբախտաբար, կայ մի բուռնականաշար սեղեւած կէտ, ուր Լափրովը թող է տալիս իրեն ձանաշել իր ամբողջականութեան մէջ գոնէ հիմնական գծերով: Պա Լափրովի պատմափիլիսոփայութիւնն է:

Պատմափիլիսոսփայ յ աւթիւնը մի գոգմա-
տիկ և խորհրդապաշտ մտածողի համար յաճախ այլ
բան չէի քան իրականութիւնից կտրուած, և թերի մեջ
սաւառնող ինչ որ բացարձակ իրեաների, ինչ որ խոր-
հրդաւոր յայնսգործութիւնների մի ժամագրամայր
Ամեն այդպիսինի համար պատմափիլիսոսփայութեան մեջ
պրակտիկան ոչ միայն ստորագրուած է թէորիային, այլ
նոյնիսկ յաճախ պակասուած է այդ պրակտիկանը

Քեաշխատ (իրապաշտ) Լափրովի համար, սակայն պատ-
մափիլիսոսփայութիւնը ներկայացնում է այն կիզակենտ-
րունք, որոնց ձուլում են իրար հետ թէորիայից և
պրակտիկայից, եկող ճառագայթները և երկու շրջանների
այդ ճառագայթների նպատակայարմար զուգահեյու-
թիւնից առաջացած նոր խորքները կրկին սփռում չորս
կողմ եւ միամիտ ու մոլորութեան մեջ կը լինի նա, ով կը
ջանայ ամեն մէկը այդ ճառագայթներից բաժանել միմից
և մատնանշել Պատմափիլիսոսփային, ահա պրակտիկան է
եթէ խօսելու լինինք Լափրովի լեզուով, նրա պատմա-
փիլիսոսփայութիւնը չընթերցողին է դիմում ո՛չ միայն
անցեալին վերաբերող խօսքերով, այլ և ներկային՝ Այլ և
այագային — կ'աւելացնենք մենք:

Ամեն պատմափիլիսոսփայութիւն անհրաժեշտաբար
այդպիսին չէի թայց Լափրովինը իր տրամաբանական
ամբողջ կատուցածքով, իր բարոյահասարակական բու-
վանդակ լոգիկայով այդպիսին է:

Եւ ամեն գիտնական ու ճշմարիտ պատմափիլիսոսփա-
յութիւն այդպիսին պէտք է լինի:
Պատմութեան փիլիսոսփայական ըմբռնումը ըստ Լափ-
րովի պէտք է լինի ոչ միայն իրական հողի վրայ
առարկայաւորութեան հնարաւոր սահմաններում պատմական անձնաւորութիւնների և
դէպքերի, եւ թակասական գնահատումը,
այլ և ժամանակակից անձնաւորութիւններին պատմու-
թեան այդ միակ-իրական և զարգացած մղիչներին՝
ցանկանալի և հնարաւոր գործունէութիւնը ցոյց տալու՝ ուղին:

Ահա թէ ինչու մտադրելով այստեղ օրուագծերու
Լափրովի պատմափիլիսոսփայական սխտեմը իր հիմնա-
կան կէտերով — հնարաւորին չափ՝ մտածողի սեփական
արտայայտութիւններով, թեև ոչ միշտ բառացի — մեզ
թուում է, որ այդպիսով կատարած կը լինենք գէպի
մեծ ուսուցիչը ունեցած մեր պարտականութեան առա-
ջին, թեկուզ շատ փոքրիկ մասը:

Այստեղ է, որ ներածութեն կը ճանաչենք նաև պատ-
մահասարակական հոյակապ դէպքը, նրա ուժեղ ան-
հատականութիւնը:

Լափրովի պատմափիլիսոսփայութիւնը ամենալստահալի
ներածութիւնն է դէպի Լափրովի անհատականութիւնը,
դէպի պարզ և ոչ ջանկար զարգացումը:

ՍՕՅԻԱԼԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍԵՊԱՐԱՏԻԱՄԸ

ՍՕՐԱՑԱԿՈՐԱԿԱՆ ԾԱՐԺՍԱՆ ՍԷՅ

(ՆԱՄԱԿ ՎԻՆԱՍԵՑ)

II

Այդ ազգային յախտնական կնճիռն է, որ բոր-
բորում է — սինդիկալիզմի հողի վրայ — Աւստրիայի չեխ
ու գերման սօցիալիստների միջև Ազգայնական համ-
բաշխութեան ուժեղ բնազգն է, որ խօսում է չեխ ըն-
կերվարականների մէջ Մեղադրել նրանց՝ թէ գիտա-
ցարար դաւաճանում են ինտերնացիոնալին, տարաստանել
նրանց թթու, մոլեռանդ ազգամոլութեան, չովինիզմի
մէջ — ինչպէս արեցին օմանք — անհնարին է Լամոզած
սօցիալիստներ են այսպէս անուանած չեխ անջատ-
կանները, բայց և պահանջում են ինքնօրինութիւն,
ալտոնօմիա՝ նաև տնտեսական, արհեստակցական գոր-
ծունէութեան ասպարեզում:

Ինչպէս ասացինք, խնդիրը դրած էր Կոպենհագի
Համագումարի առջև և երկար, աղմկայող վիճաբանու-
թեան մէջ արտայայտեցին թեր և դեմ կարծիքներ:

Մտ յիսուն հազար չեխ բանւորներ յանկարծ ան-
ջատոււմ են Վիեննայի համալսարանական կենտրոնի
և հիմնում են արհեստակցական միութեան նոր ու զու-
ազգային կենտրոն, իրենց մայրաքաղաք Պրագայի
մէջ, ինչպէս է վերաբերում Սօցիալիստական Ինտեր-
նացիոնալը այդ խօշոր անցրին:

Միանգամայն բացասաբար Գրեթէ միաձայն — Գին-
լանդիայի Ծ ձայնի և Թիւրքահայաստանի պատգամ-
ւորների ձեռնպահութեամբ — Կոպենհագում գումար-
ւած ինտերնացիոնալը յայտարարեց, որ չեխերը սխա-
լաբար վրայ են, որ ապակենտրոնացումը տնտեսական
հողի վրայ կորստաբեր է և որ նրանց բայլը մէկ
վնասակար հետևանքներով ամբողջ միջազգային աշխ-
տաւորական շարժման համար:

Մի բանիսը Կոպենհագի Կոնգրեսի անդամներից ա-
ռաջարկում էին ծայրայեղ ու վիրաւորական բանան
չեխ անջատականների՝ դեմ առաջարկում էին գա-
տապարեւել նրանց, որպէս դաւաճանների: Այդ մտքով
եր խօսում է միջի այլոց Լեգիէն, գերմանական
սօցիալ-դեմոկրատիայից, Կոնգրեսը սակայն — դարձեւ
գրեթէ միաձայն — յետ մղեց այդ տեսակ առաջարկ-
ները, հասկացրեց, որ չեխերը գործում են bonne foi-ով
որ նրանք անկեղծօրէն համոզուած են իրենց տակտիկ
օգտակարութեան մէջ, որ նրանք չեն տարւած հակա-
գերմանական արամագրութիւններով և այլն:

Ահա այն գանգատներ և մեղադրանքների տարափը
որ թափեցին չեխ անջատականները՝ վրայ Կոպեն-

Հագի Համագումարում *) և նրանք գալիս էին գլխաւորապէս գերմանա-ուստրիական սօցիալիստներէրց։

«Վերջին տարիներս—ասում է Հիւբեր—չեխ կուսակցութիւնը ամեն բան արաւ, ինչ որ կարող էր, որպէս զի քայքայէ և ցրէ սինդիկատները (արհեստակցական միութիւնները) և բաժանէ նրանց ութ ազգային խմբակցութիւնների միջև, որոնք կազմում են Աւստրիան... Կարելի է յիշել այս ու այն գործարանը, ուր կարելի է համախմբած գտնել մեր երկրի բոլոր ութ ազգութիւնները՝ Արգ, եթէ մենք կամենում ենք ձեռք բերել անսեսական իրաւունքներ, եթէ ուզում ենք կերպարանափոխել աշխատանքի ու օրավարձի պայմանները, անհրաժեշտ է ստեղծել մէկ միացեալ արհեստակցական կազմակերպութիւն, ուղղած ընդդէմ բանուր դատարարի անմիջական շահագործողների նոյնը կապիտալիզմի դէմ անհնարին է դառնում, եթէ բանուրական կազմակերպութիւնները մնան բաժանուած և եթէ ձեռնարկող կապիտալիստները զօրաւորապէս կազմակերպուած լինին մէկ միացեալ խմբակցութեան մէջ։ Չեխ կուսակցութիւնը ստեղծել է մի շարժում չեխ աշխատաւորների մէջ անջատական նացիօնալիզմի ոգով, — մի շարժում, որ վտանգաւոր է ոչ միայն արհեստակցական, այլ և առհասարակ սօցիալիստական շարժման համար... Նրանք աչքից թողել են սօցիալիզմի մեծ նպատակը։ Մենք յուսով ենք, որ նրանք կը վերագառնան մարքսիստական հին ճշմարտութեան. «պրօլետարները բոլոր երկրների—միացէ՛ք»։

«Ամեն մի արհեստակցական աշխատանքի առաջին սկզբունքն է միացնել աշխատաւորներին և ոչ բաժանել—յաշտարարում էր մի ուրիշ աւստրիացի պատգամաւոր Թեէր... Արհեստակցական միութիւնը**) պէտք է հիմնւի ոչ թէ երկրների, այլ «պետութիւնների» վրայ՝ Այդպիսով մեծ ծառայութիւն կը մատուցանէիք աւստրական շարժման և միջազգային սօցիալիզմին»։

«Մեր չեխ ընկերները, ասաց Լէգիէն, դէմ են գնացել նստերնացիօնալի սկզբունքներին, կազմալուծելով սինդիկատները... և սահմանելով անջատական (ազգային) կազմակերպութիւններ...»

«Պէտք է դատապարտել չեխ անջատականներին — եզրակացնում է Լէգիէն... Եթէ թող աւելի սինդիկատները հիմնել ազգային գետնի վրայ, շուտով չէր գտնուի մի երկիր, ուր սինդիկատին կազմակերպութիւնը բաժան-բաժան չը լինի։ Մենք կուենայինք այն ժամանակ Գերմանիայում լեհական, դանիական, ֆրանսիա-

կան, գուցէ նոյնիսկ Տօլլանտական սինդիկատներ (արհեստակց միութիւններ)...

«Սինդիկատին նստերնացիօնալը հիմնած է հետեւեալ սկզբունքի վրայ. քանի որ շարժումը և ղեկավարութիւնը միեւնոյնն են, բոլոր աշխատաւորները, առանց ազգութեան ու լեզուի խտրութեան, պէտք է միանան մէկ կազմակերպութեան մէջ... Մենք գերմանացիներս, հրատարակում ենք իտալերէն լեզուով մի թերթ այն հազարաւոր իտալացի պանդուխտների համար, որ գալիս են մեր երկրում աշխատելու և նոյնիսկ տալիս ենք նրանց յատուկ իտալացի պրօպագանդիստներ։ Սակայն նրանք չեն կարող կազմել մի առանձին կազմակերպութիւն։ Նրանք պատկանում են մեր կենտրոնական գերմանական կազմակերպութեանը... Առաջիկայ Համագումարը այլ ևս չը պիտի զբաղւի այս խնդրով, այլ միայն կը բննի այն հարցը՝ թէ արդեօք չեխ անջատականները պատկանում են նստերնացիօնալին»...

Լեհաստանի պատգամաւոր Պարսկի։

«Չեխերը պատճառարանում են, թէ Աւստրիայում Սօցիալ-դեմօկրատիան կազմակերպուած է ազգայնօրէն, ուստի արհեստակցական միութիւններն ևս պէտք է կազմակերպուին ազգայնօրէն... Սինդիկատին միութիւնը պէտք է որ, ընդհակառակը, օգնէ մեզ՝ յաղթահարելու քաղաքական ֆեդերալիզմը (ապակենտրօնացում)։ Ձգոյշ կացէ՛ք, չեխ ընկերներ, եթէ շատ հեռու մղէք ձեր ֆեդերալիստական ոգին, Յ տարի չի անցնի և հակառակ լեհերի բարի կամեցողութեան, մենք կուենանք մի լեհ քաղաքական արհեստակցական կենտրոն և շուտով 10 կամ 12 ուրիշ այլևայլ արհեստ. կենտրոններ... Նրանք, որոնք բաժանում են սինդիկատները կապիտալիզմի հանդէպ, ոճիր են գործում... Հնարաւոր է ամենամեծ շափով միութիւն ձեռք բերել և կենտրոնացնել սինդիկատները։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ բոլոր աշխատաւորների կուլտուրական պահանջները և լեզուական շահերը պէտք է ի նկատի առնուին»...

Գրօ յ Լիխ (Շվեյցարիա)։

«Դատապարտելու խնդիր չը կայ այստեղ չեխերը շիտակ են ու անկեղծ, բայց Պօնգրէսը իրաւունք ու պարտաւորութիւն ունի հաստատելու, որ նրանք սխալուած են և որ ճշմարտութիւնը կենտրոնացման մէջ է»։

Վիկտօր Ադլեր (Աւստրիա)։

«Մենք պիտի ջանանք պահպանել Աւստրիոյ բոլոր սօցիալիստ կուսակցութիւնների միջազգային կենտրոնացումը, թէև նա ուժեղ սպառնալիքի տակ է գտնուում ներկայումս... Չեխ ընկերները յայտնում են, որ սինդիկատները պէտք է բաժանուած մնան, քանի որ աւստրիական Սօցիալ-դեմօկրատիան էլ բաժանուած է ըստ ազգերի։ Բայց քաղաքական կուսակցութիւնների բաժանումը կատարել է ընդհանուր համառոտութեամբ և ոչ խզումով։ Չեխ ընկերների գլխաւոր կարիքները միշտ

*) Huitième Congrès Socialiste International Comptes Rendus Analytiques.

***) Թէ ի՞նչ է արհեստակցական միութիւնների կամ սինդիկատների էութիւնն ու պաշտօնը—տես այդ մասին Ե. Թոմպեանի գրքուղը «Արհեստակցական միութիւններ», հրատ. «Յառուջի» և «Հոսանքները», հրատ. «Դրօշակ» ի

ի նկատի են առնել լայն, շատ լայն, գուցէ չափազանց լայն չափով (բացականչութիւն չեխերի կողմից)։ Չեխերը, լեհերը, իտալացիք և սլովէնները ունին աւելի հարուստ սինդիկային մասուլ, քան գերմանացիք (աւսարիական գերմանացիք)։ Բնականաբար միշտ լինում են մի բանի ազգային գանգառները Բայց մի՞թէ այդպիսի անհամաձայնութիւններ չեն առաջանում նաև ազգային միապաղաղ կազմակերպութիւնների մէջ։ Եթէ բոլոր կարիքները միանգամից չեն կարողացել բաւարարութիւն ստանալ, մի՞թէ կարելի է ասել, որ Ալեքնայի համապետական յանձնաժողովը անտարբեր է գտնել չեխ սինդիկատների վերաբերմամբ... Դուք չէք ուզում կենտրոնացումը Ալեքնայում, բայց դուք ուզում էք այդպիսի կենտրոնացումը Պրագայի մէջ... Եթէ թեթև տարբերութիւն միայն կայ Ալեքնայի և Պրագայի կենտրոնացումի մէջ. Ալեքնայինը միացնում է ուժեղացնում է պայքարի համար, այն ինչ՝ Պրագայինը՝ բաժանում է և թուլացնում պայքարի միջոցները... Մենք չենք ուզում վիրաւորել չեխ ընկերներին, քանի որ երկար տարիներ պայքարել ենք նրանց հետ թե՛ թե՛ և պիտի շարունակենք պայքարել յանուն նոյն դատի... Ես խնդրում եմ Ինտերնացիոնալին՝ չքայնել մեր արհեստակցային շարժման միջից անհամաձայնութեան ամեն մի կայծ։ Դուք չէք կարող այսօր դատապարտութեան վճիռ արտասանել չեխ ընկերների դէմ, այլ միայն մի կոչ ուղղել նրանց...

Օ տ ո ս Բ ա ու է ր (Աւստրիա).

«Ես կարծում եմ, որ օտար երկիրների մեր ընկերներից շատերը դեռ չեն ըմբռնել ճշտապէս մեզ առջողւած պրօբլեմը... Կացութիւնը բաւական արդէն գէշ կը լինէր, եթէ մենք գործ ունենայինք Աւստրիայում միմիայն տնտեսական սահմանափակումների հետ Բայց չեխ ընկերները շատ աւելի հեռու են գնում։ Նրանք ուզում են իրենց ավտօնօմ (ազգային, ինքնօրէն) կազմակերպութիւնների մէջ մտնել ցիր ու ցան չեխ աշխատակորներին, մինչև իսկ երբ նրանք բնակուում են ոչ-չեխ շրջաններում։ Նրանք ուզում են բաժանել սինդիկատները ոչ թէ ըստ երկրային սահմանների, *territoire*-ի, այլ ըստ ազգութեան։ Եթէ օրինակ մի գործարանի մէջ աշխատում են 200 գերմանացի և 3 չեխ, այդ երեք չեխ ընկերները պետք է գրին Պրագայի կենտրոնի վրայ (ուժից բոլոր չեխ պատգամակորների կողմից)։ Միջազգային Սօցիալիստական Համագումարը պետք է յայտարարէ, որ Աւստրիայի մէջ, ինչպէս և բոլոր բազմալեզու երկիրներում, մենք պետք է գործադրենք մէկ միայնակ միջազգային մեթօդ սինդիկային կազմակերպութեան»։

Հ ա յ վ ու դ (Ամեր. Միաց. Նահանգներ).

«Մենք ևս անհրաժեշտ ենք համարում սինդիկային կազմակերպութեան միութիւնը Ինտերնացիոնալիզմի

մերքենան՝ չի ձանաչում ազգութիւնը՝ Ամերիկեան մեկ ածխահանքի աւազանում մենք գտնում ենք յաճախ 32 զանազան ազգութիւններ։ Այդ պատճառով մենք, ամերիկացի սօցիալիստներս, նոյնպէս կողմնակից ենք սինդիկային մէկ միացեալ (կենտրոնական) կազմակերպութեան։ Բայց, տարբարտարութեան մեր երկրում ևս սինդիկային շարժման միաւորումը չը պիտի կարողանայ շուտով կատարել։ Ենթական դժարութիւնները որոնց դուք հանդիպում էք Աւստրիայում, չնչին բան են հանդէպ համերաշխութեան այն պակասութեան, որ յատկանշում է կացութիւնը Միացեալ Նահանգներում»։

«Եւ գեռ երկար շարունակեց վիճարանութիւնը չեխական «սեպարատիզմի» շուրջը։ Մի այլ պատգամակոր նկատում էր, որ «մէկ ձակատարութի մէջ մի բանի ազգային բանակներ կարող են կուտ մտնել, բայց անհեթեթ բան կը լինէր միևնոյն բանակի համար հրամանատար նշանակել վեց զօրավարներ»։

«Մի արիշը... * * *»

Այժմ լսենք չեխ «անջատականների» ինքնապաշարպանութիւնն ու արդարացումը։ Կուտ անդի մէջ, այնքան ծանր դիտողութիւնների ու ամբաստանութիւնների հանդէպ՝ նրանք ևս երբեմնապէս դիմում են ծայրայեղութեան և առիտ են հակառակորդներին այնպիսի հակահարածներ, որոնք չէին լինի պաղ, օրեկտիվ վիճարանութիւնների ընթացքում։

«Սեպարատիզմի» կամ սինդիկատների ազգայնացման գլխակոր ներկայացուցիչն է Անտօն Նեմեց, չեխ սօցիալիստների ամենաականաւոր առաջնորդը, որ մի քանի անգամ խօսք առաւ այդ շարատանջ խնդրի առթիւ, նոյն կօպենհագի Համագումարում։ Ականջ դնենք Նեմեցին.

«Մեզ մեղադրում են, թէ իբր մենք կոմերում ենք անջատական ոգով թուլացնել արհեստակցական շարժումը և վնասել կազմակերպութեան միութեանը։ Այդ մեղադրանքը ճիշտ չէ։ Աւստրիայի մէջ շատ ազգեր կան և կազմակերպութեան զարգացումը այնպէս էր, որ Աուսակցութիւնը ժամանակով ստիպւած եղաւ հաշի առնել ազգային խմբակցութիւնները։ Աուսակցութիւնը (այսինքն տարող Աւստրիայի Սօցիալիստական Աուսակցութիւնը) բաժանուած է ազգային ավտօնօմ, ինքնօրէն ճիւղերի։ Աւստրիական (Ալեքնայի կենտրոնական) Միսգիկային Յանձնաժողովը երբէք չի կամեցել ի նկատ

առնել չեմ սօցիալ-դեմոկրատիայի desiderata-ները, իդէալը և այդ պատճառով մենք հիմեցցինք Պրագայում (ԲօՏեմիայի կամ չեխերի հայրենիքում) 1896—97-ին մէկ չեխ սինդիկային Յանձնաժողով, որը տարիներ շարունակ աշխատել է համերաշխ Վիեննայի սինդիկային Յանձնաժողովի հետ: 1900-ին, օրավարձն աւելացնելու համար ժողով կուլի մէջ Վիեննայի այդ Յանձնաժողովը խոստովանեց, որ չեխ սինդիկային Յանձնաժողովը Լայնորեն կատարել է իր պարտաւորութիւնը: Ամսօրնաւում, միջազգային արհեստակցական Խորհրդաժողովին իրաւունք չուրին չեխ Յանձնաժողովին իր ներկայացուցչութիւնն ունենալու, և Աւստրիայում ամեն ճիգ թափեցին ուժեղ կենտրոնացում ստեղծելու Վիեննայի մէջ: Մենք փորձեցինք պահպանել չեխ սօցիալ-դեմոկրատիայի ազդեցութիւնը սինդիկաների վրայ, բայց մեր բոլոր խնդիրները մերժւեցին: Եւ ահա այդ պատճառով կազմակերպութիւնները (չեխական), որ շէին կարող զարգանալ այդ գորուոր կենտրոնացման ռեժիմի տակ, խզեցին ամեն յարաբերութիւն Վիեննայի սինդիկային Յանձնաժողովի հետ: Այն ժամանակ փորձեցին դուրս վտարել այդ կազմակերպութիւնները սինդիկային շարժումից և կուսակցութիւնից, նկարագրեցին նրանց անդամներին, որպէս վատ արհեստակիցներ և վատ սօցիալ-դեմոկրատներ, որովհետև նրանք չէին ուզում հպատակել Վիեննայի սինդիկային Յանձնաժողովի ձևակերպած սկզբունքներին: Ընաւաւոր է արդեօք, որ մի մեծ քաղաքական կուսակցութիւն, որպիսին չեխականն է, կարողանայ յարաւել, բաժանւած երկու մասերի — մի կողմից քաղաքական շարժում, միւս կողմից՝ արհեստակցական, սինդիկային: Այդ է, որ մենք չը կամեցանք շտուկաբարուս: Մենք այնտեղ բնեցինք կուսակցութեան և սինդիկաների յարաբերութիւնները և հաշակեցինք, որ բանի աւելի միացած լինի կուսակցութեան և սինդիկայի գործունէութիւնը, այնքան աւելի նա արդիւնաւոր կը լինի իր հետեանքներով: Պէտք չէ, որ անհնարին դարձնէք այդ սկզբունքի գործադրութիւնը: Պէտք է, որ ազատ թողնեն մեզ ղեկավարելու մեր կուսակցութիւնը և մեր սինդիկաները, առանց չափազանցուած կենտրոնացման: Այդ պայմաններում մենք միշտ պատրաստ ենք կուլելու համերաշխ գերմանացի ընկերների հետ: Եւ մենք երբէք էլ դիտաւորութիւն չենք ունեցել որևէ բան նրանց դէմ ձեռնարկելու: Անկարելի է յիշել գործադուլի կամ սինդիկային պրոպագանդի որևէ դեպք, ուր մենք լիովին կատարած չը լինենք մեր պարտաւորութիւնը գերմանացի ընկերների վերաբերմամբ: Վերջապէս չեխ աշխատաւորների մեծամասնութիւնը այլ ևս չի պատկանում Վիեննայի (կենտրոնական, համապետական) սինդիկային Յանձնաժողովին, այլ պատկանում է Պրագայի կենտրոնին: Եթէ դուք ուզում էք բացարձակ կիրառութիւն առնել միութեան

սկզբունքին, ինչու չէք անում այդ բեղչիայում, ուր սօցիալիստ աշխատաւորների փոքրամասնութիւնը միայն պատկանում է կենտրոնական սինդիկային կազմակերպութեան: Դ, մանապէս Ֆրանսիայում, Իտալիայում, Անգլիայում արհեստակցական կազմակերպութիւնը այն աստիճան կենտրոնացած չէ, ինչպէս մեզ մօտ: Եւ սակայն այդ կենտրոնացումը շատ աւելի դիւրին կը լինէր այնտեղ, քան մեզ մօտ:

Պէտք է ի նկատի առնել մեր կացութիւնը: Քաղաքական կազմակերպութիւնը (այսինքն իսկական չեխ կուսակցութիւնը) դրամական ֆօնդ չունի... Գերման ընկերները պէտք է հաշի առնեն չեխ սօցիալ-դեմոկրատիայի յուսահատ վիճակը: Պրոլետարիատի կուլը կապիտալիզմի դէմ կարող է ղեկավարել միայն մի այնպիսի կազմակերպութեան ձեռքով, որը թոյլ կը տայ շարժման բոլոր ճիւղերին զարգանալու ազատօրէն... Վիեննայի սինդիկային Յանձնաժողովը անունով է միայն միջազգային, բայց նա շարունակական յարաբերութիւն է պահպանում գերման կուսակցութեան հետ... Պէտք է, որ այդ կացութիւնը փոխել վաղ թէ ուշ: Պէտք է գտնել սինդիկային կազմակերպութեան մի նոր ձև: Չեխ աշխատաւորների մեծամասնութիւնը ասում է.

— «Գործերը կարգադրում են Վիեննայում, գուցէ և լաւ են կարգադրում, բայց — միմիայն Վիեննայում»:

Չի կարելի դրա համար մեղադրել չեխերին, քանի որ նրանցից առաջ ԲօՏեմիայի գերման ընկերները ասում էին.

— «Ամեն բան կարգադրում է Պրագայում, իսկ ինչ որ Պրագայում է կարգադրում, մենք նրա համար մի սանտիմ էլ չենք տայ: մենք ունինք մեր Վիեննան և մեր Վիեննան բաւական է մեզ»:

Ահա այսպէս է, որ զարգացել է, բնականաբար, ազգային հակամարտութիւնը: Եւ նրանից խոյս տալ կարելի է միայն մէկ ձևով. պէտք է ստեղծել կազմակերպութեան մի այնպիսի ձև, որը համապատասխանէ բոլոր շահագրգռածների պահանջներին և նպաստաւոր է բոլոր ազգերի լիակատար զարգացման: Եթէ այդ չ'անենք, բոլոր ընդունելիք որոշումները ոչինչ բանի պէտք չեն գայ:

Ներկայ պարագայում մի աւելի ուժեղ կազմակերպութիւն չէ, որ պիտի ղեկավարէ ուրիշ աւելի մանրները, այլ երկու կազմակերպութիւններ են հրապարակի վրայ (գերման և չեխ), հաւասարապէս ուժեղ և հաւասարապէս զարգացած, որոնց միջև պէտք է հաստատել օրգանական յարաբերութիւններ, առանց որ մէկը ստորագրուի միւսին... Ինչ է իմտերնացիօնալիզմը, միջազգայնութիւնը: Մի՞թէ նա բացասում է ազգայնութեան: Մի՞թէ դա հակազգայնութիւն է: Չեխերի իմտերնացիօնալիզմը չի կարող այնքան հեռու երթալ,

որ դրժէ իրենց սեփական ազգայնութիւնը: Ինտերնացիոնալիզմը նշանակում է՝ որ երկու կողմերը, իբրև իրաւահաւասար մարտնչողներ պատրաստ են մասնակցելու ընդհանուր կռիւն՝ ազատագրելու համար աշխատաւորութիւնը տնտեսական գերութիւնից և բաղաբաւկան ստրկացումից:

«Այդպէս ենք մենք ըմբռնում ինտերնացիոնալիզմը: Ընկերներ, լաւ պատկերացրէք ձեզ կացութիւնը: Ընկեր Ազգերը ասաց այստեղ բացայայտ կերպով, որ Վիեննայի համապետական Յանձնաժողովը (կենտրոնը) գերմանական մի հիմնարկութիւն չէ, այլ միջազգային: Իրաւ է, որ նա ունի, իբրև կցորդ, ուրիշ ազգեր ևս, բայց նա ունի տարածութեան գերմանական բնուորութիւն, գէթ մի յայտնի չափով և չեխերի համար անհնարին է աւելի երկար հանդուրժելու այդ մարմնի տարածութիւնը... Բայց բոլոր մեծ բաղաբաւկան կամ սինդիկատին պայքարների մէջ չեխերը տայիս են իրենց գերմանացի ընկերներին ամենալայն համբարաշխութեան հաւաստիքներ... Սկզբունքի խնդիր չը կայ այստեղ, այլ զուտ գործնական մի հարց է, որ վերաբերում է կազմակերպութեան լաւագոյն ձևին: Եթէ այդ պատճառով սպառնան հեռացնել չեխերին ինտերնացիոնալից, նրանք ստիպւած են պաշտպանել իրենց՝ ամենակորովի կերպով... Մենք միայն հաւասարութիւն ենք պահանջում: Երբ երեք հոգի ապրում են միևնոյն սենեակում և չեն կարող համաձայնել, նրանց անջատում են միջնացանկերով... Մենք պահանջում ենք, որ Ինտերնացիոնալը խնդրին տեղեկանայ օրեկտիվ կերպով, անաւտօրէն... Չեխերը ուզում են լինել գերմանացիների հետ, որպէս հաւասարը հաւասարի հանդէպ: Երբ մենք կազմակերպեցինք մեր կուսակցութիւնը (բաղաբաւկան մարմինը) Փէդէրատիվ, գաշնակցական ձևով, մեզ այն ժամանակ ևս մեղադրեցին շփոխիզմի մէջ: Եւ սակայն, առանց այդ բաժանումի՝ * մենք չէինք ունենայ 1905-ի շարժումը և չէինք նւաճի ընդհանուր ընտրողական իրաւունքը: Զատ-գատ ընթանայ և մեկտեղ կուել — այդպէս է եղել մեր նշանաբանը: Մենք չենք էլ ուզում օրսայ աշխատաւորներին ամենայնպէս համայնների մէջ միշտ վերջին մարդը, բայց մենք ուզում ենք ստեղծել կենտրոններ, ըստ այլազան լեզուներով: Մի քիչ բարի կամեցողութեամբ՝ մենք կը գտնենք մի ձև, որ համապատասխան կը լինի բոլոր դաշնակից ազգութիւնների շահերին, մի ձև, որ պիտի աճեցնէ աւստրիական աշխատաւորական շարժման ներթափանցման ուժը...»

* Այժմ, երբ ֆինլանդիան կորցրել է իր ինքնօրինութիւնը,

*) Ինչպէս ասացինք «Գրոշուկի» անցեալ համարի մէջ, աւստրիական ազգերի սօցիալիստ կուսակցութիւնները (այ սինդիկատին, այլ բաղաբաւկան) կազմակերպւած են իւրաքանչիւրը ինքնավար ձևով, իր ազգային սահմաններում և բոլորը միացած դաշնակցական կապերով, կազմում են համաաւստրիական Սոց. կուսակցութիւնը:

թիւնը, դուք տրամաբանօրէն պէտք է ստիպէք Ֆինլանդացի սօցիալիստներին ևս՝ միանալ ուսական սինդիկատին շարժման... Փորրիկ ազգերը պէտք է գտնեն արդարութիւն Ինտերնացիոնալի ծոցում»:

Տ ու ս ա ր (մի այլ չեխ անջատական):
«Բացարձակ անհեթեթութիւն է մեղադրել մեզ նացիոնալիզմի մէջ: Իբրև աշխատաւորներ, մենք երբէք չենք մեղանշել մեր միջազգային պարտաւորութիւնների դէմ: Բայց մեր բոլոր խնդիրները՝ ի նկատի առնելով՝ մեր չեխական օրինաւոր պահանջները՝ վարարագար մերժել են Վիեննայի համապետական Յանձնաժողովի կողմից: Չը նախած դրան՝ մենք դարձեալ պաշտպանում ենք պրօլետարական կուլի միութիւնը: Բայց ըստ մեզ անհրաժեշտ չէ, որ ամեն բան կատարի Վիեննայի կենտրոնական Յանձնաժողովի հրամանով: Մենք չեխերն պահաս ուժեղ չենք, քան Աւստրիայի գերման սօցիալ-դեմոկրատիան: Աշխատաւորների թիւով՝ մենք ընդհակառակը, աւելի ուժեղ ենք: Մենք ունինք 24 պատգամաւոր Սոցիալստի (պարլամենտի) մէջ: Աւելիք աւելի հարուստ և ուժեղ մամուլ, քան Աւստրիայի գերման սոց.ները: Մեր կը ածենէք աշխարհի երեսին, որ մի ուժեղ բաղաբաւկան կուսակցութիւն կառավարել տայ իր դրամական հասոյթները մի ուրիշ կուսակցութեան պատահանող ընկերների ձեռքով: Մենք պահանջում ենք և իրաւունք ունինք պահանջելու, որ մեզ իրաւունք տան տնօրինելու մեր դրամազուխները: Մենք ուզում ենք ունենալ անկախ, ավտոնոմ մարմին (օինդիկատին, արհեստակցական), որպէս զի կարողանանք լաւագոյն ձևով կազմակերպել չեխ աշխատաւորներին և աւելի լաւ պատրաստել նրանց դասակարգային կուլի համար: Սպառնալիքները և ծանր խօսքերը չեն կարող վախեցնել մեզ»:

Ինչ է մեր եզրակացութիւնը, այժմ, երբ լիակատար ձևով իջոյց գրինք այդ նոր հոսանքի թեր ու դէմ ձայները:

Դժարանում ենք ձևակերպել որոշ կարծիք: Թուզում է, թէ սա այն փափուկ և կնճռոտ խնդիրներից է, որոնք չեն կարող բաւարար լուծումն ստանալ Ինտերնացիոնալի մի հաւաքական բւեարկութեամբ և որ ի վերջոյ պիտի թողնի ամեն մի երկրի սօցիալիստներին՝ ազատօրէն տնօրինելու իրենց ընթացքը, ինչպէս սօցիալիզմի շատ ուրիշ խնդիրներում: Աւստրալոյս, անջատականութիւնը — կամ գործածենք աւելի լաւ բառ — ազգային ինքնօրինութիւնը (ավտոնոմիան) արհեստակցական կազմակերպութեան մէջ ունի իր խոշոր անպատահալութիւնը, նա կարող է, սիրալի, երբեմն կտրատել, թալանցնել աշխատաւորական ընդհանուր շարժումը կապիտալի դէմ:

(այդպէս, օրինակ, արեւմտեան քաղաքակիրթ երկրների մէջ), բայց մէկ կենտրոնի միահեծան ղեկավարութիւնն ևս իր ոչ նւազ անհանգստացուցիչ անպատեհութիւններն ունի, ինչպէս այդ մասամբ ցոյց է տալիս չեխական օրինակը, ինչպէս, մանաւանդ, ներշնչում է մեզ մեր բազմացեղ, բազմալեզու Բաբելոնների — Ռուսաստանի, Թիւրքիայի — կացութիւնը:

Արդարեւ հնարաւոր է արդեօք ֆինլանդացի սօցիալիստներին կապել, միացնել համառուսական արհեստակցական մի կենտրոնի հետ, դնել նրա ղեկավարութեան տակ: Այ, ի հարկէ. և ֆինլանդացիք արտայայտեցին այդ ոչ-ը իրենց ձեռնպահութեամբ կօպենհագի Համագումարում: Հնարաւոր է առհասարակ Պետերբուրգ նստող մի կենտրոնական մարմնի միջոցով վարել համայն Ռուսաստանի աշխատաւորական, արհեստակցական շարժումը...

Դրական պատասխան չենք կարող տալ հակառակ Պլեխանովների և բոլոր ռուս սոցիալիստների լուստես պահանջին:

Հնարաւոր է, մանաւանդ, կիրառել Ինտերնացիոնալի վճիռը — սինդիկատի կազմակերպութեան միացման մասին — Թիւրքիայում: Հնարաւոր է մի կենտրոնական գրամարկդի ու Բիւրօի միջոցով տնօրինել և ղեկավարել արհեստակցական շարժման ճակատագիրը հայ, թիւրք, բիւլղ, յոյն, բուլղար, հրէա և այլ աշխատաւորների մէջ...

Մեր վերջին Ընդհանուր ժողովի մէջ ևս կային սակաւթիւ ընկերներ, որ հնարաւոր էին ընդունում այդ միութիւնն ու կենտրոնացումը: Սակայն, Ընդհանուր ժողովը, յարգելով հանգերձ մեր երիտասարդ ընկերների գաղափարային և օպտիմիստ յափշտակութիւնը, գիտակցելով, սակայն, թէ որքան տակաւին քէն ու աւանդական թշնամութիւն է ամբարած ազգերի նոյնիսկ աշխատաւոր հատւածների մէջ, թէ որքան վտանգաւոր ու ապարգիւն է մինչև իսկ սահմանել արհեստակցական կազմակերպութիւններ միջկոսակցային գետնի վրայ (հայ ազգային շրջանակներում), ուր նոյնպէս, պէտք է անպակաս լինին հակամարտութիւններն ու գոթութիւնները — Ընդհանուր ժողովը ընդունեց հետևեալ որոշումը.

Նկատելով
 որ պրպագանդը՝ թէ բանաւոր թէ գրաւոր, պէտք է որ կատարի հնարաւոր եղածին շափ ուժերու խնայող տնտեսութեամբ, իսկ այդ տնտեսութեան ամենէն բարձր աստիճանին կարելի է հասնել այդպիսի միջավայրի մէջ, ուր կը տիրէ համաձայնութիւնը մը լեզուի, հազարամութեան և զարգացման աստիճաններու:

որ հայերուն բնակած բազմացեղ և բազմալեզու միջավայրերուն մէջ տակաւին կը տիրեն ազգային խոր հակամարտութիւններ և փոխադարձ անմատահութիւններ — երևոյթ մը, որ կազմակերպութիւններու ներքը կրտսեղծէ անխուսափելի

ընդհանուրներ՝ փարբամանութիւններու և մեծամասնութիւններու միջև, կազմաւորած երկու վարչական մարմինները նորածիլ միութիւններուն:

որ նման բաղխումներ անմիջապէս տեղի պիտի ունենան այն պարագային, երբ հայ աշխատաւորութեան մէջ ևս առաջ գան կուսակցական բաժանումներ:

որ հայ աշխատաւորութեան շահերը կրնան իրապէս բարձաւածիլ այն պարագային միայն՝ երբ դրացի ժողովուրդներու մէջ ևս կազմակերպւած կ'ըլլան աշխատաւորական տարրերը ու երբ միջազգային բովանդակ աշխատաւորութիւնը իր համերաշխ ճիգերը կ'ուղղէ ընդհանուր թշնամիներուն՝ աւատակաւնութեան և կոպտի աշխատիչի դժբախտ դէմ,

որ հայ ընկերակարական մտաւորականութիւնը, իբր աւելի գիտակից և պատրաստած տարր մը Թիւրքիայի մէջ, պարտի իր ուժերուն ներած շարժիլ ղեկավար հանդիսանալ բնական կ'ըլլէ ազգերու աշխատաւորութեան.

1) Աշխատաւորական կազմակերպութիւնները դնել ազգային և կոսակցական գետնի վրայ, իսկ ուր անթիւն է ատ, անժամանակե կամ զմեկ միջազգային ամկրտակցական տնտեսական վրայ: Բոլոր աշխատաւորական կազմակերպութիւնները ամպայամմ պարտիմ համերաշխօրէմ և միջազգայնաբար գործել տնտեսական ծեռմարկմբու մէջ (գործադու, պոլքուտ և այլն):

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն
 Ա Ն Յ Ե Ա Լ Ի Ա Ր Շ Ի Վ Ն Ե Ր ՈՒ Մ
 (ՀԱՏԿԱԿԱՆ ԵՐՈՇՄԱՆ ԿԱՍՊԱՍՄՈՒԹԻՒՆՆԸ)

*Per me si va nella citta dolente
 Per me si va nell'eterno dolore
 Per me si va tra la perduta gente
 Lasciate ogni speranza, voi ch'entrate*.)
 Dante

Բազմահայը դարեր սուր և հուր կը բերեն ի Հայաստան: հօր ազգեր կը խուժեն, բանակներ կ'որոտան, կը գոռան, արեամբ կը ներկեն, աւերակով կը լեցնեն զայս: Բայց նա միշտ անմտ կը մնայ, նա միշտ կը վերականգնի, նա միշտ կրպակէ, որ օր մը իր դերը լեցրէ աշխարհի մէջ, այն դերը, որ իրեն ճակատագրեալ է: Աւերին Ըստից մէկ բարձրաւանդակին աէր և Եփրատայ արգասաբեր հովտին բնական ժառանգ՝ հայը դեռ ևս ստանձնած, կատարած չէ այն դերը, զոր կրպակեն իրեն բազաբազխութիւն և քաղաքակրթութիւն:

(Խորէն Նարեյ Լուսինեան, Քերիլի վեհաժողովի ստիւ Ազգային ժողովի մէջ արտասանած իր խօսքում, 1878 թ. 10 նոյեմբեր):

Իջնեք Դանտէի գոթիքը — և չ'ողբանք, չ'անիծենք, այլ ձգտենք հասկանալ Մտեանք իրերին՝ պաղարիւն և վեհանձն առարկայականութեամբ, ինչպէս որ

1) Այստեղից կ'ընթանան դեպի ցաւոտ մայր-քաղաք, Այստեղից կ'ընթանան դեպի վիշտ յաւերժական, Այստեղից կը բայլեն դեպի կորուած մարդիկներ, Թողէք այստեղ ամեն յոյս, դուք բոլոր անցորդներ: (Դանտէի խօսքեր՝ դժոխի իցնելիս)

կը վայելէ մեծ, հպարտ սգաւորներին, վշտատանջ, բայց և զգաստ, գիտակից ազգերին: Մտեանսը՝ դիտակցելով, որ համաշխարհային պատմութեան մի արարածն ենք ապրել մեր վտիտ ուսերի վրայ— թէկուզ և ամենաախուր, ամենահեղ արարածը— մի պատմութեան, որ նոյնպէս իր երկաթէ օրէնքներն ունի, որ նոյնպէս թաւալուում է պաշ, անողորմ, քարասիրտ տրամաբանութեամբ, ինչպէս ամբողջ շնչաւոր և անշունչ տիեզերքը...

Եւ երբ մենք մտանում ենք այդ արիւնոտ ֆաօսին— որ կոչուում է հայկական պատմութիւն — երբ սկսում ենք փորփորել հայրենի և օտար գրականութեան արշիվները, երբ թէկուզ հարեանցօրէն գիտում ենք այդ պատմութեան պղտոր, արտասուխառն հոսանքը, թըշնամի հօրդաների խօզական գահաՎիժումները, լքումք և օրհասի վիթխարի գալարումները, երբ զարհուրած անցքերի գաժանութիւնից, ընթերցողը մի վայրկեան կանգ է առնում և փորձում է հաշիւ տալ ինքնիրեն այդ հօկայ, անօրինակ դրամայի վերաբերմամբ, — մի հարց, անխուսափելի և ասնջալի, ջցուում է նրա խռովեալ գիտակցութեան մէջ.

«Ինչպէ՞ս կարողացանք ապրել...»

Ինչպէ՞ս այդ վտիտ, անզէն ժողովուրդը, որ բնաւ չէր կոչւած գոյութեան մարտի համար, որ վաղուց ի վեր, իբրև ճշմարիտ խաչակիր - քրիստոնեայ, մարզել էր լոկ համակերպութեան ու կրաւորականութեան հաւատամքի մէջ— ինչպէ՞ս նա կարողացաւ, այնուամենայնիւ, ապրել ու յարասել այն աւերիչ ուրագանների միջոցին՝ քարբարոս արշաւանքների, բռնի կրօնափոխութեանց, մասսային բնաջնջման, բռնակալական անդադրում սարսափների մէջ, ինչպէ՞ս նա կարողացաւ ճողոպրել այդ անօրինակ նահատակութեան անդունդներից, ծածանցնելով մշտապէս— շարժարանքի իր անեզր ովկիանի մէջ— ոչ միայն իր գոյութեան, այլ և համեստ, թանկարժեք քաղաքակրթութեան դրօշը. ինչպէ՞ս էր, որ այդ դարաւոր և անլուր սահնակներից դուրս լողալով, նա կարողացաւ — վերջին 20 տարւայ ընթացքում, թեև արդէն յօշոտւած, անդամալոյծ — ապրել մի այլ ճգնաժամ, ամենամեծը, ամենահարկուն, որ իր եզակի դժոխայնութեամբ կը գերազանցէ «Աստուծային Ձաւեշտի» *) սասանեցուցիչ յղացումն անգամ, ապրեց՝ և այսօր յոյսերի ու գրականների նոր պաշարով բեռնաւորւած, ճակատը միշտ հողմերին, գնում է թառելու քաղաքակրթութեան սանգուխի պատուաւոր աստիճանների վրայ, գնում է բազմուլ լուսաւոր ժողովուրդների արեօպագում, իբրև օսմանեած, ռուսական, արևելեան պետականութեան մի ազգեցիկ գործօն, գնում է կատարելու այն դերը, որ 34 տարի առաջ, պատմական անմոռանալի թւականին,

ծանուցանում էր տարաամ կերպով բերլինեան Ախհա-ժողովի հայկական պատգամաւորութեան մի անդամ.

Գրեթէ առեղծւած...

Փորձենք լուսաւորել գէթ մի քանի խորշերը այդ զարմանալի և զարհուրելի առեղծւածի փորձենք առաջագրել ոչ միայն հայկական այդ դարաւոր նահատակութեան հակիրճ ուրւագիծը իր էական պատճառների ու հետևանքների թափօրով, այլ և ըմբոստմաբուս և գործի հազարէպ և հրապուրիչ ցուցերը, մասնաւորապէս վերջին գարում, ի գէմս հայկական վեհափառ պլէթանների՝ Ալիշանների ու Խրիմեանների, Ռուսինեանների ու Պալեանների, Նալբանդեանների ու Բաֆֆինների, որոնք մի հզօր և մարտաշունչ հայրենասիրութեամբ սողորւած, ձգտեցին խորակել քրիստոնեական աղէտարբեր համակերպութեան զօգամը, փաբատեղ տգիտութեան և բռնութեան ձմեռը ազատատենչ քարունի հմայիչ գեղգեղներով, ձգտեցին առաջ մղել հայրենի ժողովուրդը Արևմուտքից զօզանջող կոչերի ուղեկցութեամբ, և իրենց անդուլ ճիգերով— մերթ խաղաղ, օրինական, մերթ գոռ և ապրտամբ— պատրաստեցին ըմբոստացման այն անհրաժեշտ փոթորիկը, որին մենք ականատես եղանք վերջին քառորդ դարի ընթացքում, Թիւրքաց Հայաստանի մէջ, որին դեռ ականատես ենք Հայրենիքի երկու միւս հատուածներում, Վոլկաս և Պարսկաստան:

Առեղծւած— այն՝ Հայ ճակատագիրը ըմբռնելու համար անհրաժեշտ է մտքի մեծ ու հուժկու ճիգ. հայ իրականութեան արիւնլայ խորշերը թափանցելու և պազօրէն, առարկայօրէն ցուցադրելու համար՝ անհրաժեշտ է նաև կամքի ու նիւրաբերի ծայրագոյն լարումն և մի տեսակ անզգածութեան, հանդարտ, փիլիսոփայական ինքնատիրապետման խոշոր զօգ — մարդկայնօրէն գրեթէ անհնարին...

Առեղծւածային էութիւնների մէջ՝ միշտ մի յայտնի ուժ է թագնւած— ասում է փիլիսոփայական տարրական իմաստութիւնը: Գիտակցե՛նք այդ ուժը— և թո՛ղ նա հայ-ժողովրդական սերունդների մէջ նոր կորով ներշնչէ, ստեղծագործ, հայրենաշէն նոր եռանդ՝ ոչ միայն պրպլետելու, ուշիուշով ուսումնասիրելու հայրենի պատմութեան արիւնազանգ արշիվները — մարի և հոգու լիակատար անդորրութեամբ— այլ և հզօր ու գիտակից ներազդակ լինելու այդ պատմութեան խորհրդաւոր յեղյեղումների...

ԿՐՕՆԵՎԱՆ ԸՆԿԱՍԻՐԵՐՑՈՒԹՅՈՒՆ

—

Ն ա հ ա ա կ ու թ իւ ն ը ս կ ս ու մ է Կ Ր Օ Ն Ի նշանակի տակ: Նրա հակազդակ— ը մ բ ո ս ա ա ց ու մ ը՝ նմանապէս: Ո՞րն է որին յաջորդում, ո՞րն է պատճառ,

*) La Divina Commedia.

որը հեռեանքի Գիւրինն է պատասխանելու Մի բան միայն բացայայտ է. — անհաստական նահատակութիւններն երկամսաձիգ շարանը, որ կարմրագոյն ժայռէնով ձգուում է հայկական տարեգրութիւնների միջից, հիւսւած է ըմբոստացման անհաշիւ ու մոլեռանդ, բայց և վսեմ, խորհան արտայայտութիւնների հետ ըմբոստացում՝ յանուն կրօնի ու եկեղեցու, յանուն խղճի ազատութեան:

Կրօնի, խղճի ազատութեան պատերազմը նախորդել է ամենուրեք արևմտեան աշխարհի մէջ՝ բոլոր միւս ազատութիւնների պատերազմներին: Կրօնական պայքարի ձևը, իբրև տիրող և ծաւալուն, զանգւածային մի երևոյթ, կարելի է ասել, առաջինն է, սկզբնականը՝ քաղաքակիրթ մարդկութեան մրկածուփ կրկեսներում: Մարդկութիւնը նախ և առաջ խորտակել է խղճի վրայ ծանրացած կապանքները, ապա նա փշրել է քաղաքական-բանաստեղծական շղթաները, ապա և դիմել է ամենածանր, ամենակնճառս պրօբլէմին — տնտեսական ազատութեան և հասարակութեան պատերազմին:

Հետևաբար ասիական լեռնադաշտում թափած փոքրիկ հայ ազգը բացառութիւն չկազմեց համաշխարհային օրէնքից. նա էլ ապրեց — մանրանկար ծաւալով, բայց աւելի արհաւիրտ ու արիւնտ ելեէֆներով — քաղաքակիրթ մարդկութեան բազմերանգ ճակատագիրը նա էլ անցաւ պօրթլեմների ու պայքարների նոյն էական հանգրւանները, և նախ քան ծածանեցնել քաղաքական ազատութեան դրօշակը իր անհամար լեռների մէջ, նախ քան փարել ժողովրդայնութեան ու «աշխարհիկ» յեղափոխութեան համամարզկային աւետարանին՝ նա պայքարեց երկար դարեր յանուն պաշտած իր հասարակութեան եկեղեցու, սրբազնագոյն հռչակած աւանդների, տեւց անթիւ ողջակէզներ, տեսաւ անթիւ նահատակութեան խաչեր ու գերաններ, հեծկլտաց, արտասուց իր «սրբերի», «ղինւորների» *) շիրիմներին, և իր արեան թանկագին գոլորշիների հետ դէպի երկինք առաքեց — ամբողջ դարեր շարունակ — իր լիկ, կրաւորական «ըմբոստացման» սրտածմիկ աղօթքները:

Կրօնը, այո, նախնական սրբութիւնն է, նա մարդկային համայնքների առաջնագոյն իրողութիւններից է: Ազգը, Հայրենիքը, Հայրենասիրութիւնը — յեթագոյն աւելի անագան գոյացումներ են. Հայրենիքը կարելի էր անոնահարեց ազգութիւնը կարելի էր յօշոտել ցիրցան անել, անտեսապէս ստրկացնել, հարստահարել և տանջել, մարդկանց կեանքն իսկ տրորել, սընչացնել — հայ մարդը, անուամենայնիւ, կը տոկար, կը համբերէր: Բայց կար մի բան, որ նրա աչքում գերագոյն, ան-

բանաբարելի սրբութիւն էր — իր հաւատը և նրա համար, յանուն նրա՝ կապտամբէին ու տրիւնով իսկ կը բողոքէին ազգի ընտիր, զգայուն, զաղափարական տարրերը... եթէ կարելի է «զաղափարական» յորջորջուժը առայտ կոյր, մոլեռանդ, տարերային ընդվզումներին:

«Թէև ազեւ և վատ տեղեակ իրենց կրօնին անուամենայնիւ, երբ պէտք է մեռնել հաւատի համար, նրանք (հայերը) գնում են զւարթ և բաջարար դէպի չարչարանք» — այսպէս է վկայում Յաւփերնիէ, հռչակաւոր ֆրանսիացի ծանապարհորդը, որ 17-րդ դարում վեց անգամ պտոյտ է արել մահմեդական Արևելքի մէջ, տեղն ու տեղը ծանօթանալով նաև հայոց կացութեան ու բարքերի հետ:

Ինչքան սրտագրաւ էջեր ունի այդ զարմանալի արկածախնդիր ուղևորի մեծահատոր աշխատութիւնը *):

Ահա նա Յիգրանակերտում Հայկական մարտիրոսութեան ցնցող իրողութիւնները շանթում են նրա հարուստ, ֆրանսիական երևակայութիւնը, և նա յուզիչ գոյներով նկարագրում է՝ այնտեղ, Յիգրանակերտում, կատարած (1651 թիւն) արևելեան բարբարոսութեան մի տեսարանը՝ Պատմեք այն հեղինակի խօսքերով — և կը տեսնենք մի-երկու ստիկոմալի դէպքերի մէջ ցուցող մեր վաղեմի իրականութիւնը:

Հարսանիք էր, ասում է Յաւփերնիէ, մի թիւրք երիտասարդի և իր ցեղակից մի աղջկայի Տղայի մայրը հրաւիրում է ի միջի այլոց իր մտերիմ ընկերակից մի ունեւոր հայ տիկնոջ, որ ունէր մի մատաղահաս արու գուակ, Այդ վեղջինը ցանկանում է ուղեկցել իր մայրիկին, նոյնպէս լինել հարսանիքում: Բայց թիւրքական օրէնքը կար, որ արգելում էր վեց տարեկանից բարձր քրիստոնէայի մանուկներին՝ խառնելու թիւրք կանանց ու աղջկանց հետ: Տղայի խնդրերը այդ պատճառով մերժուում էր: Բայց նա դարձեալ շարունակում է աղերսել: Թիւրքասում է հօրաբայրը և ասում են տղային թիւրքական հարսանիքը, բայց ծպտեալ, զգեստաւորած, սրպէս աղջիկ Սկսում է պարել: Եւ այդ պարի միջոցին հայ տղան իր անտոյժը շարժումներով մատնում է անմիջապէս իր սեռը: Թիւրքասում թերթուհի զարկում է ահագանգը... Շիֆթութիւն, իրարանցում և ցատկոս աղաղակներ:

«Սա դիտութեամբ է կատարւած, որանք ուզում են ծաղրել մեր օրէնքը և հաւատը... ասում է խուժանը և պահանջում վրէժ, պատիժ: Տղայի հայրը միջամտում է, խոստանում իր հարստութեան կէտը, ապարդիւն: Եւ կատարւում է մի ճշմարիտ Գողգոթայ, սկսում են անուր շարժարաններ: Կանգնեցնում են հայ տղային քաղաքի մեծ հրապարակում, մերկացնում են և կաշին սկսում են բերթել... Մոլլան, քաղաքի այլ իսլամ կղերականները համախառնում են և պահանջում, որ տղան գրկէ մահմեդական հաւատը: Թերթու՛ւ... Ստիկայի տանջանքների մէջ զոհը մեռնում է, և ապա փաշան վրայ է հասնում ու կտրել տալիս գլուխը:

Թի այլ օրինակ, ոչ պակաս հիացուցիչ — ասում է Յա-

*) Tavernier: Les six voyages en Turquie, en Perse et aux Indes, pendant 40 ans.

*) Այդպէս է որակում հայ ժողովուրդը իր սրբերին, դէթ մեզ մօտ, Անդրկովկասում, Զինա, որ կամ գիւնուր — ասել է մարտնչող և միանգամայն նահատակ յանուն կրօնի ու եկեղեցու:

վերին: Նահատակութեան թատերարժեք Ասան է Էջայ և թիւրք մանուկները, դարոցներին դուրս գալով, երբեմն սովորութիւն ունին իրարու վրայ քարեր նետել: Մի որ այնպէս եղաւ, որ կուէ միջոցին մի Տայ մանուկ գետին դուրս մի թիւրքի և մեռցրցց: Անմիջապէս վրայ թափուցին մութ կարիքը և խուժանք. պահանջեցին, որ սպանողը փոխէ հաւատը, գառնայ իւլամ՝ իր ոճիրը բաւելու համար: Եւ մերժումը հանդիպելով՝ որոշեցին մահով պատժել: Յարան մանկան իր կատարած սպանութեան տեղը: Առաջին հարուածը հասցրին սպանածի ծնողները, ապա տեղաց քարերի տարափը խուժանի կողմից: Մանուկը մեռաւ:

Առաքել վպ Ղափրիժեցու պատմութեան մէջ գտնում ենք նոյն դէպքերը, փոքր ինչ տարբեր նկարագրութեամբ: Այդտեղ սրբերի շարքում գտնում ենք Խաչատուր Յիգրան ակերտցի անունով բնանամայ երիտասարդին (նահատակած 1652-ին), որ թերևս նոյն Տայերնիէի յիշատակածն է, միայն տարբեր պատճառների ցուցադրութեամբ:

Դատը և պատիժը այսպէս են պատմած.
 ... Եւ ժողովեցան բազում մահմեդականք... և յափըշտակեցին զխաչատուրն և տարան առ զատարն: Եւ դատեին ի մահ զխաչատուր... Եւ Մուֆթին ետ ֆաթիւյ.

«Դէտք է զնա քերթել»:

Եւ ապա առեալ զխաչատուրն՝ տարան առ փաշայն: Իսկ փաշայն... ասաց. «տամ քեզ բազում զանձն և զպատուական ստացւածս... և կին զեղեցիկ, եթէ ուրանաս զքրիտոստէական հաւատն և ընդունիս զհաւատն Մահմեդի»: Եւ խաչատուր ոչ ուրացաւ: Յայնժամ եկեալ դահճացն՝ իբրև զգազան արիւնախանձ, պատեցան շուրջ զնովաւ և մերկացուցին զնա և կապեցին ձեռս ի յետս և առեալ տանէին ի տեղի սպանման... Եւ ժողովեցան ի վերայ նորա բազում թիւնք մահմեդականաց, իբրև զուազ ծովու անթուլի և իբրև զգազան կատարի կրճատէին զատարնս իբրեանց ի վերայ նորա, հարկանէին, Կոփահարէին և ընդ քարշտ տանէին... Եւ ապա զազան դահիճքն պատառեցին զմորթ մարմնոյ նորա յաջոյ ուսէն մինչև զմատոյ ուսն և քերթեցին զկաշին թիկոնացն և իջուցին մինչև զքամակն և շրջեցին զկաշին ի վերայ միջացն. այլ և յառաջուտ կոզմանէ քերթեցին զմորթ լանջացն՝ մինչ ի ներքոյ ստեանցն և շրջեցին զմորթն ի վերայ փորին: Եւ ապա տարեալ շրջեցուցանէին ի մէջ քաղաքին... և ամենայն տեսողած մարմինք ստկացեալ սարսուէին:

Եւ ապա... ասացին դահիճքն ցխաչատուր. «Որովհետև յամառիս և ոչ լսես մեզ, արդ՝ տարածեա զձեռս քո ի վերայ վիսիդ՝ զի խորտակեսցուք»: Եւ նա յօժար կամօք իբրևմ տարածեաց զձեռան ի վերայ վիսին և դահիճքն հարին կացնաւ և խորտակեցին զբազուկան երկոցունց ձեռացն: Ապա խնդրեցին զոտան և նա տարածեաց զերկոսին ոտան և դահիճքն խորտակեցին զոլոքս երկոցունց՝ ստացն... Եւ յետ անադելոյ հոգւոյն սրբոյ, փառաւորեաց զնա Տէրն Քրիստոս, զի յոյս պայծառ էջ յերկնից ի վերայ նորա...

Ասի դէպքը (1655 թ.) Առաքել Ղափրիժեցու պատմութեան մէջ այսպէս է նկարագրւած.

Այր ոմն՝ որուն անունն էր Սիրուն և էր սա յաշխարհէն Ասպուրականի... Յաւուրս գարնայնոյ գնացեալ ի Ղաթ, էառ կեռաս, երարձ ձիոյն և երեք ի Աւան քաղաք: Եւ եկին

ժողովեցան ի վերայ նորա մանուկնք մահմեդականաց և իբրեքանչիւր որ ընթացեալ յափըշտակեր կեռաս ի բեռանէ անտի, իսկ Սիրուն ոչ թողոյր յափըշտակել, այլ հալածէր զմանկունս: Եւ ոմն ի մահմեդականաց մանկանոյն առեալ բռնաբար և եհար զՍիրուն քարին. իսկ Սիրուն առեալ զքարն ձգեաց առ ձգօղն, և դիպեցաւ քարն ի գլուխ տղային և վիրաւորեաց և... սատակեցաւ տղայն ի պատճառէ վիրացն:

Եւ սուխտէք քաղաքին զուժարեալք ի միասին, երկու և երեք հարիւր սուխտայք դրոհ տուեալ ժողովեցան ի վերայ անպարտ երիտասարդ Սիրունին, ամենքեան մերկացուցեալ զուրս իբրեանց, թուր և խանջալ, մեծարան խրիստոսոք ահաջուցանէին զնա՝ թէ «Դարձի՛ր ի հաւատս Մահմեդի և տաճկացի, ապա թէ ոչ սրախողխող և քարկոծ լեալ մեռանիս ի ձեռաց մերսց»: Իսկ Սիրունն ոչ հաւանէր. «Ձրոյս հաւատս իմ ոչ թողում»...

Եւ... մարդազէմ գազանք սուխտայքն յաւուրս բնան կապեալ զձեռս ի յետս, գլուխ ի բաց շրջեցուցանէին ի մէջ քաղաքին Աւանայ և... ի գլխոյ մինարէին կանչեն ի ժամ աղօթիցն իբրեանց, ասելով թէ «Խանդարեալ խափանեցաւ և յերկիր սուղաւ հաւատս մահմեդական, զի անհաւատ հայ զմուսուլման սպանեալ է»:

Եւ... բերեալ հասուցին ի Նալբանդանոցի շուկայն և անգէն ի սուխտայիցն ոմն շարագոյն, որ ի ձեռին իբրում ունէր մերկ զխանջալն, ուժգին բազմամբ և հար ի թուլակուշտ Սիրունին, և նա անկաւ ի վերայ երեսացն. և այլ ոմն սուխտայ առեալ ծանր վէճ մի՝ եզարկ ի վերայ գլխոյ Սիրունին և ջարդեաց զգլուխն և ի բաց ցնտեցաւ ուղեղ գլխոյն... Եւ ապա եղին պարան յոտան և քաշեցին տարան արտաքոյ քաղաքին... և անդէն զմեռեալ մարմինն քարկոծեցին, այնքան՝ մինչ որ ծածկեցաւ ի քարանցն և ապա թողեալ ի բաց գնացին արիւնարու գազան սուխտերն:

Լեգենդականը, հիպերբօլիկը, չափազանցութիւնը, անտարակոյս, իրենց որոշ բաժինն ունին այդ սրտաուռ պատմութիւնների մէջ, բայց և, անշուշտ, պատմական եղելութիւններ են այդ դէպքերը, ցնցող ու արտասուշարժ՝ անգամ իրենց մերկ պարզութեան մէջ:

Ժողովրդական երևակայութիւնը ամենուրեք աւելի ևս գեղեցկացնում, զարգարում է այդ դէպքերի հերոսներին արտասովոր յատկանիշներով, ապիս է նրանց հրաշքի բնոյթ և «սուրբերը», նահատակները գառնում են մի մի գեղարձարգ:

Ժողովուրդը պաշտում է նրանց, իր հաւատի «զինուորներին», երդում է նրանց անունով, առասպելներ և երգեր է հիւսում նրանց շուրջը... Ժողովուրդը պաշտում է նրանց մօտաւորապէս նոյն եղանակով, ինչպէս այսօր մի Գեորգ Չափուշ պաշտամունքի առարկայ է Ցարունի հայութեան շատ զգայուն ու բարեպաշտ արտերի համար: Ահա մի երգ, ոտանաւոր, որ յօրինւել է 1784-ին նահատակած Թուխման Տիգրանակերտցու, որ մահմեդական կրօնը արհամարհած լինելու համար պատժւել էր կախաղանով.

Մանուկ անուն ոմն Թ. ու խ. մ. ան, յիստ
 Որ էր երկրէս նա Տիգրանեան,

Ասոր միում՝ յանկարծական
Փայլեաց իբր ասող առաւօտեան:

Կացեալ ընդդէմ բռնաւորաց,
Մեծամեծաց, գառոււորաց,
Չօրէնս նոցա արհամարհեաց,
Դաւանելով զՔրիստոս Ասուած:

Յայնժամ ցտեալ բռնաւորին
Եւ ետ հրաման մահու նորին.
Առեալ և դուռ ժամու բերին
Չնա անդէն զլիստեցին:

Արիական քաջ նահատակ,
Հեղեք զարիւնս իբր վտակ,
Սիրով արբեր զմահու բաժակ
Ի հանդէս քո հրճին հրեշտակք:

Այլ երգ *), հիւսուած ի յիշատակ մի երիտասարդ
Տայ նահատակի:

Եւ յարձակին փոյթ ընդ փոյթ
Դահիճք վառեալ թ զէնս ահեղ
Իբրև ի գաշտ մարտի դառլթ
Յալով յանդէն մարմինն անմեղ
Սնդե՞ն... ոչ: Լոյս չեր անդէն,
Աուր և ասպար ունի նա իւշ
Յոր պատասպար հոգեղէն
Ի մենամարտ մատչէր յառաջ,
Չայս մի տալով պատասխան.
«Ես Քրիստոսի եմ զօրական...»

Կախաղանները, «մարտիրոսութեան խարոյկները»
բարձրացել են Թիւրքիոյ մէջ՝ նաև 19-րդ դարու միշտ
դարձեալ իբրև ծնունդ նոյն կրօնական հակամարտու-
թեան: 1843 թվականու մէջ. Յովակիմ Սամաթիացի
անունով մի հայ, մահմեդականութիւն ընդունած լինե-
լով, մի քանի տարի յետոյ զղջում է և խոստովանում
մի քահանայի Բայց մատնութեամբ բանտարկում է և
ենթարկում չարչարանքի: Ծնողները անգլիական զե-
սպանի, լորդ Քանինկի, միջամտութիւնն են աղերսում:
Դեսպանը միջամտում է, մեծ վեցիբը մինիստրական
խորհրդի մէջ կարգում է նրա դիմումը, սակայն զեն-
պետը (Էէյիս Ուլ Իալա՛մը) և մի քանի մոլեռանդ նա-
խարարներ արհամարում են զեսպանի խնդիրը և
գլխաւել տալիս հային «ի Պալլոք բազար, դուռն Գոնս-
անդնուպօլոյ» **):

Անգլ. զեսպանը զայրացած և միւս պետութիւնների
զեսպաններն ևս՝ գրեցին իրենց կառավարութիւններին,
եւ «թագաւորք եւ յոպացւոց համաձայնութեամբ և
խորհրդով միմեանց հետ գրեցին առ օսմանեան կառա-
վարութիւնն, խտաիւ պահանջելով զազատութիւն կրօնի
ամենայն ազգաց... Թող առցի ամենայն ումէք պաշտել
զոր կրօն և ինքն կամօցի»:

*) Մանանդեան և Աճառեան, «Հայ նոր վկաներ», եր. 731:
**) Դեպքը նկարագրւած է Անետիս վարժապետ Պերպե-
րեանի «Պատմութիւն հայոց»-ի մէջ, հրատ. 1871-ին:

Բ. Դուռը իբր թէ զիջեց. «Այս մահ և նահատա-
կութիւն Յովակիմայ եղև սկզբնապատճառ ազատու-
թեան կրօնի»:

Այնուհետև իբր թէ բրիտանեայ ազգերը «թոյլու-
թիւն ստացան շինել և նորոգել զեկեղեցիս, առաւել
վայելուչ և պայծառ, քան զառաջինն»:

Եւ նոյնիսկ «եղար զանգակատուն յեկեղեցիս Հայոց
և Յունաց՝ փոխանակ անախորժ ձայնից ժամակոչաց»...

Իսլամական մոլեռանդութեան և բարբարոս չարչա-
րանքի դէպքեր է պատմում նաև Լոբզորու մի անգլիական
հիւպատոս Ռօբեր Կրչըն (Robert Curzon), իր կարևոր
աշխատութեան մէջ Armenia. A year at Erzeroom,
and on the frontiers of Russia, Turkey and Persia
(հրատ. 1854 թ. Լոնդոնում):

Դեպքը անդի է ունենում 1843-ի օգոստոսին: Պատ-
մենք կրթչընի խօսքերով.

Մեհմեդ անուն մի Թիւրք վաճառական բերում է իր
ապրանքը Գենջէ աղայի խանը (պանդոկը) և այնտեղ քնա-
նում: Երկու Թիւրք զինուորներ պահում են քովը: Յաջորդ
առաւօտը ապրանքը չկայ: Մեհմեդը մեղադրում է զինուոր-
ներին: Երկար ուրանալուց յետոյ, որանք վերադարձնում են
վաճառականից զողջած ապրանքի կէսը և յայտնում են, որ
միւս կէսը գողցել է օգարաշին, Արթին անուն հայը: Ար-
թինը քաշում է դատարան: Փաշան հրամայում է «տան-
ջել» նրան, երբ նա յայտնում է, որ բոլորովին անտեղեկ
է գործից:

Գլխին դնում են պղնձէ այրող մի թաս և վիղբ շւան են
կապում: Չգում են շւանը, մինչև որ աչքերը համարեա
դուրս են ցցւում ոլորտոյթից: Մտքը շարունակում է
ժխտել: Սկսում են ունելթըով դուրս քաշել ատամները,
եղունդները: Ամբողջ 12 օր այդպէս տանջում են այլ և այլ
ձևերով, ապա բանտ նետում:

Օգարաշին տանջել ու բանտարկել է փաշայի մի կա-
մայական կարգադրութեամբ, ասում է կրչըն: Գնում են
պաշատ վախի, Քիսմիլի փաշայի մօտ: Նա յայտնում է, որ
մտքը յանցաւոր է, իր սեփական վկայութեամբ իսկ... «Եւ
քանի որ Գուրջ այդպէս կարեկցութեամբ հոգում էք նրա
վիճակի մասին, ես ազատել կը տամ նրան և կը յանձնեմ
Ձեզ»:

Ես պատասխանեցի. «ուրախ եմ լսել, որ մարդը չի շար-
չարել, որովհետև մեզ մօտ Անգլիայում շարչարանքը հա-
մարում է ոչ-անհրաժեշտ մի անգթութիւն, սակայն Ձեր
պատմածը փոխում է խնդիրը. մարդը, անտարակոյս, յան-
ցաւոր է, և ես կուզեի, որ արդարութիւնն ի գործ գրէր.
մի՞ յանձնէք ինձ այդ մարդուն, այլ պատժեցէք ըստ օրէնքի,
միայն մի՛ տանջէք: Եւ մեկնեցի Նրեկոյեան, լսելով, որ
օգարաշին կինը տուն է եկել, ես առացի ծառայիս, Պատօ
կայեւլիին, որ հայուն ազատելու իմ ցանկութիւնը փոխեց,
որ նա տանջանքի չի ենթարկւել և որ նա յիբաւի գող է:

Ինչպէ՞ս, բացականչեց Պատօ, սաստիկ վրդովւած. գող նա
կարող է լինել, բայց տանջանքի նա, անկասկած, ենթարկւել
է, ես ինքս տեսել եմ սեփական աչքով փաշայական պա-
լատի բակում: Տեսայ այդ խեղճ ողորմելի հային ոչխարի պէս
զետին գլորւած և բոլորովին ապշած սարսափից ու տան-
ջանքից: Ատամները, եղունգները քարում էին, երանքները՝
պատռւում ունելթըով, նա կիսամեռ վիճակի մէջ էր... Եւ

ճշում էր եր շրջապատողներին: «Ինչ կարող եմ անել, ես անմեղ եմ, սպանեցէր ինձ, բայց ես չեմ կարող վերագործնել այն երբը, որ չեմ վերցրել ... Ա՛հ, նա բրիտանացի է, չէ՛, հայր բրիտանացի է, թիրաբերը շատնչեցին զիւսործներին, որոնք յանցանոր են, բայց այս մարդը տանջեց, որ րա՛վ է, ես է՛»:

Ինձ համար անսխմելի էր այդ—չորսնասկում է հիստորիայը երեկ վաշան եկաւ նախաճաշի և ես նստիւ ինչոցիկ ի յայտ բերել ճշմարտութիւնը փաշան խոստացաւ բերել ինձ օտարաշին: Եւ ես ստուգեցի, որ յիրախ տանջել են... ամեն բան ճշուեց... Մարմնի վրայ երևում էին ուժեղիբի հետքերը և ուրիշ սպիտակ վերքեր: Ահներև... սպառնացներ էին դարձր... (տե՛ս 1930)

Մեկուսացած, սպորտսիկ ղեպքեր չեն սրանք մեր *ancien régime*-ի տակ, նախայեղափոխական վիճակի մէջ, որի «բարիքները» (յաճախ են շեշտել և դրատել մեր մի կարգ հակայեղափոխական հրապարակագիրները, քանի՛ նոյնանման իրողութիւններ են արձանագրուած հայոց տխուր մարտիրոսութեան արշիւններում և քանի՛սր չեն արձանագրուած. թէ նորագոյն ժամանակներում, երբ բիշ թէ շատ գործադրել է քրիստոնեայ ծերայայի բարոյական հսկողութիւնը, թէ մանուսմտ նախնի գործերի մէջ, երբ բնաւ չկար հսկողութիւն: Հայ տարրը մշտնջենապես ենթակայ է եղել մի բացառիկ ռէժիմի, մի բացառիկ օրէնսդրութեան, նա չի վայելել անգամ այն խղճուկ հաւատարմութիւնը, որ տիրել է միշտ միևնոյն անծայր բռնապետութեան ինթարկած ստրուկների մարդկային նախնիների մէջ: Անքղեւ յետոյ կը բնորոշենք նախայեղափոխական այդ կացութեան անօրինակ սարսափները, հայ մարդու, «հայքաղաքացու» կրած բոլոր գերմարդկային տանջանքները, առայժմ մեզ պէտք է ի յայտ բերել այն խորունկ, արտասուելի տարկանանութիւնները, որ ծնունդ է տուել կրօնների, դաւանանքների անհաշիտ հակամարտութիւնը, երկու տարբեր քաղաքակրթական ուղղութիւնների միջև ձգւած խրամատը: Մասնագիտական օրէնքներին ենթարկուած քրիստոնեանների պատմութիւնը — ասում է Փօն Համմեր—մի մշտնջենապէս անհասնում տեսարան է վայրագութեան ու բռնակալութեան: Արքայ, թագաւոր, սելջուկի օսման և այլն—բոլորն էլ թողել են այդ երկրի մէջ աշխարհաստեան դադանութիւնների իրենց հետքերը: Լանկ-Քամուր և Համիդ տարբեր չեն իրենց տների ու բնաջնջան մեթօսներով: Եւ թո՛ւմ Բեճօփացու աչքով տեսած ու նկարագրած 1424-ի արևան բազանիքները տարբեր չեն Գիլանների ու Կեպուսների սրտակերպարած հայիական նորագոյն ղաւաւ մեքերից: Այն ժամանակ ևս — թաթարական, մոնղոլական հօրդանների օրով—նոյն մասալին խոճապները, նոյն յուսահատ լացն ու փախը, կանանց ու երեխաների սրածուծութիւնը, նոյն խօջական գահաձիւժութիւնը ժայռերից, նոյն աղէկաւոր հաւարը, նոյն ծանօթ պատկերները, ջարդ, թալան, սիրամ, բռնաբարքում և օրրապղծում,

բարբարոսութեան մի վիթխարի, համայնաջինջ հեղեղատ, մի հակայական դարհուրանք...

Թւում է թէ օսմանեան արքայատոհմի հաստատութեամբ մեր երկրի մէջ թագաւորում է համեմատական անգորութիւն մի տեսակ «պրօգրէս», հանդէպ նախկին արհաւիրքի բասուի թւում է թէ օսմանցիների տիրապետութիւնը բերեց այդտեղ մօտաւորապէս նոյն կայուն, յարաբերաբար խողաղ և հանդարտելի կացութիւնը, որ տիրել էր արևմտեան Եւրոպայում Փեղալիզմի արիւնտա բասուց յետոյ, բացարձակ միտակետ ու թեան յաղթանակով փոքր ինչ աւելի ապահովութիւն, փոքր ինչ նւագ ցնցուժներ ու կատալիզմներ, սրածուծութիւններ ու աւերումներ:

Սակայն ոչ մի համեմատութիւն չկայ, ի հարկէ ֆրանսիական Արև-Արքայի կառավարութեան (*Le roi soleil*, Լուիզօփիկոս XIV-ի մեկդիրը) և օսմանեան սուլթանների հաստատած ռէժիմի միջև...

Յարաբերաբար—պրօգրէս, այո, բայց անդունդ կայ յարաբերակաւնի և բացարձակի մէջ: Պրօգրէս էր դա, համեմատած նախկին կացութեան հետ,— այն կացութեան որ յաջորդել էր ազգային բաղաբական անկախութիւնը կորցնելուն փոքրագոյն չարիք էր դա—բայց դարձեալ հակայական:

«Քրիստոնեանների պատմութիւնը մասնագիտական օրէնքների տակ—մի անհասնում տեսարան վայրագութեան ու բռնութեան»:

Ճիշտ է ասում Փօն Համմերը և հայոց կրած մարտիրոսութիւնը չունի իր նմանը համաշխարհային տարեգրութեան մէջ: Լեռու ենք աշտոտ նախապաշարուով խոսքնելու գոյները և պատմական տխուր յուշերով սուեր ձգելու հայ-մահմեդական յարաբերութիւնների վրայ, որոնք այսօր սկսում են մտնել նոր սուալի շրջանի մէջ: Լեռու ենք նաև մահմեդական կրօնին յատկացնելու տիրական միահեծան դեր այդ անօրինակ բազմագործայ ստիւնների մէջ: Լանկ թագաւորները չեն խնայել նաև իրենց հաւատակիցներին, չեն խնայել յաճախ և սելջուկները, տաճիկները, բլբղերը, արմենական հակամարտութիւնը: Ինչպէս տարբերակայ գլխին, մերք չենք էլ հակած իւրաքանչիւր համայնայնեքթիւնը: քրիստոնեութիւնը, իրեն յօգով և իրեն սխալաբ չարքայախօսութիւնը: Միջոցով ու միջոցաւոր մակարդակով: Սակայն պատմութիւնն էլ փոխել չի զինի և մենք պէտք է տանք անաշտօրէն մեր տարբեր պատմական ճշմարտութեանը: Եթէ կրօնները ընդհանուրապէս նախաքրիստոնէ կրօնը—իրենց տարաբարձ բնաւորութեամբ—դարերով արծարծած կոյր, եղանակ մեղաւորութեամբ յաճախ աղէտալի, բթացուցիչ և պատակտի դեր են խողացել մարդկային պատմութեան մէջ, ապա այդ գերը մասնաւորապէս աղէտալի է իսլամ աշխարհում: Այժմ

կրօնական հակամարտութիւնը ընդհանրապէս ասեղ թափով ծանրացել է համաշխարհային պատմական զարգացման վրայ: Երբ ասեղի ծանր է եղել և շարաշուք՝ նրա թափը իսլամահպատակ բրիտանացի ազգութիւնների ճակատագրի վրայ:

Որքան բան կայ ասելու այդտեղ: Որքան հարուստ ու արգասաւոր է հասարակական եւօլիցիտի մեջ կրօնի այնոր մղձաւանջը իր այլազան արտայայտութիւններով ու ազդեցութիւններով, նա միահեծան տնօրինողը չէ այդ եւօլիցիտի, ինչպէս երբեմն ծանուցում էին աստուծաբան սոցիոլոգները: Նա այն հղօր խթան-պատճառը չէ պատմական վերիվայրումների, ինչպէս ընդունում են դեռ այսօր ևս շատ բարեպաշտ մտածողներ: Եւ յաճախ իսպառ նսեմանում է անտեսական պատճառների գործառք ճնշումի տակ, յաճախ իսպառ հաշտում է, չորհանում — իբրև «խթան» և «ազդակ» — դասակարգերի խօշական բաղադրիչների, նրանց նիւթական տեսութիւնների յորձանքի մէջ:

Սակայն, այդտեղից մինչև «անտեսական մատերիալիզմ» պնդումները՝ դեռ հեռու է կրօնը միշտ չի հպատակում նիւթական և նիւթապաշտական մղումներին, դասակարգային անձուկ մտահոգութիւններին: Նա գործում է երբեմն նաև իբրև ուրոյն, անկախ մի ուժ, որ իր խոշոր անդն ունի իդէոլոգիական, գաղափարաբանական ուժերի շարքում: Կան վարկեաններ և շրջաններ, կան ամբողջ ազգերի պատմութիւններ, ուր կրօնական ազդակը հանդիսանում է երկար ժամանակ, իբրև հրամանատար բոլոր այլազան գործօնների ու պատճառների վրայ, նսեմացնում է նրանց ուժը, ճնշում է, կաշկանգում անտեսական ազդակների թռիչքն ևս, ձևաւորում է, մի խօսքով՝ կեանքի այլազան հիւսածքը իր տարրամբժ պատգամներով, պահպանում է իր յարատև լուծակալութեան տակ բաղաբանութիւնը, իրաւունքը, օրէնսդրական և դատական հաստատութիւնները, ժողովրդի, զանգուածների մտածողութիւնն ու կամեցողութիւնը և այլն: Այդպիսի իշխող դեր է ունեցել իսլամը, մահմեդական հաւատամբը մինչայսօրեայ պատմութեան մէջ: Երբ դերը նա շարունակում է մասամբ նաև մեր օրերում, Սահմանադրութեան յաղթանակից յետոյ:

Ոչ մի այլ անեղ, գուցէ ոչ մի այլ պատմական ժամանակաշրջանում կրօնական իդէոլոգիայի (ideologie) բնակար տիրապետութիւնը չի շեշտուում այնքան ուժով, այնքան գոռոզ յաւակնութիւններով, ինչպէս այնտեղ, մահմեդական երկիրներում: Այդտեղ ևս, անտարակոյս — ինչպէս կը տեսնենք յետագայում — պետական կոճիւնների միոյնին կրօնը երբեմն յետ կնահանջում քաղաքական և անտեսական անհրաժեշտութիւնների տղև, — անհրաժեշտութիւններ, որոնք ստիպում են սուլթաններին և հոգևոր պետերին՝ փոխել իրենց սրբազնագոյն օրէնքի բառը, փոխել նրա մեկնաբանութիւնը, դիմել անարժան

կազմուիւտիկի, յարմարեցնել ղուբունի պատգամները նոր կացութեան պայմաններին ու պահանջներին: Սակայն, ընդհանրապէս կրօնական ֆեոտիշը իշխում է տիրակնուօրէն, երկրաւոր հեղինակութիւնները հպատակուում են երկնաւորին, Ղաւբանը տօն է տալիս ամբողջ պետական օրաշտանաւարութեան, նա տօն է տալիս — որ ամենից սայրապիելին է — մահմեդական միլիտարիզմի զանգուածներին:

Առ ի չգոյե ուրիշ, աշխարհիկ ուժերի՝ իտլավը այդտեղ, կարելի է ասել, դարբնում է ազդի ամբողջ ներքին կեանքը, նա դարբնում է և միջազգային յարաբերութիւնները, ասելի ճիշտ՝ յարաբերութիւնները իսլամ ցեղերի և նրանց հպատակ ազգերի միջև: Թողնենք առայժմ «ներքին» անդրադարձումները և քննենք իսլամ կրօնի ազդեցութիւնը միջազգային կամ ասելի ճիշտ՝ տիրող ու հպատակի դարաւոր յարաբերութիւնների վրայ: Երբ որ ի իր իր զանազան մտածողութիւնով — սկզբ դատաւար ծանաւում այնմեղանայով ի՞նչո՞ղ նայ — շատ իմաստ, յո՞նար շարք * * * միլիտարիզմը լուծակալութեամբ ազդ յիսլամ, շրջանը միողոտ արժեւորման և արտաքին մի շարք ճանապարհորդներ և գրողներ բազմիցս հոշակել են օսմանեան և ընդհանրապէս մահմեդական համարներ ուղակի թիւնը (tolerance) քրիստոնիայ հպատակների վերաբերմամբ: Արքիշները կան նոյն եւրոպական շրջաններում, որ քունել են արտաքծօրէն հակառակ գիրքը: Արքիշները խորապէս բաժանում են այդ հարցի մէջ: Ինչպէս որ նրանք բաժանում են և իսլամի ամբողջ կրօնական դօքտրինի և աշխարհահայեացքի դնահատութեան մէջ:

«Համբերողութեան» պատրանքը ստեղծել է թերեւս գլխաւորապէս շնորհի այն հանգամանքի, որ այլաքեղ ու այլադեան արդրերը օսմանեան կայսրութեան մէջ — քրիստոնեայ հայեր, յոյներ, սլաւներ, կիսակն սպաշտասօրիներ, սասանաբապաշտ եղիպիներ, մովսիսապաշտ հրեաներ, սպա գրուգներ, զբլբաշներ և այլն — սահպանել են դարերի ընթացքում իրենց գոյնը ու դասանանքը իրենց լեզու և հաւատքը, որ մասնաւորապէս պետութիւնը չի աշխատել ձգել ելու նրանց (թէև կարող էր գոցել ձուլել), մինչդեռ ասելի քաղաքակիրթ, նոյնիսկ արևմտեան պետութիւններից օմանք մեծ եռանդով ու սխտեմով հետապնդել են «այլազգիներին» կլնելու և «մարսելու» նպատակին: Երբ որ Դատարարը, յիբաւի, բուսական ուժեղ է թուում է թէ գժար չէր օսմանեան պետութեան հաւատ՝ մահմեդականութեան գիրկը նետել մի ամբողջ շարք դարերի ընթացքում — մի բուն հայ ժողովրդին և արապական միջամտութիւնը չ'օգնեց այդ վերջինին անգամ 20-րդ դարում մէջ, սպաւաղիւնում միջազգային գաշնագիրներով — ուր մնաց թէ նա օգնութեան գար ճօքը Ասիայի մի բուն անյայտ «այսին» ներին 15-րդ, 16-րդ, 17-րդ

գարեբուս... Եթէ անոցորմ հետևողականութեամբ սկզբից ի վեր հնչէր ծանօթ դեղեմը՝ «մահակալանացում կամ մահ», եթէ սուլթանները փորձէին յարանաճիգերով և խմբական սրածուծիւնների սպառնալիքով կրօնափոխ անել իրենց հպատակ «նայեա»ներին, թուում է թէ այդ փորձերը չէին վիժի... Հազիւ թէ հայ ժողովուրդը զանգուշուած ընտրէր մահը, իսլամացման վտանգի դիմաց... Անշուշտ, բրիտանականների մի ընդհանուր ըմբոստացման հետևեալը—նոյնիսկ բիրտ, անասնական ստրկութեան այն խաւար ժամանակներում—որոշ չափով մտնում էր սուլթանական հաշիւների մէջ, այնուամենայնիւ, այդ տարտամ հնարաւորութիւնը չէր, որ պիտի կանգնեցներ խալիֆներին: Աղիւն են, հարկու, ուրիշ կարգի «զապանակներ»՝ Եղիւ է մասամբ անտեսանալիս պատճառը, որ քիչ առաջ յիշատակեցինք:

Օսմանեան քաղաքական սիւսուեմը իր հիմնադրութեան օրերից ի վեր որոշել է ի սեպի ջնջելու կամ բռնի իսլամացնելու նաճած աշխատուոր բրիտանեայ ազգաբնակչութիւնը, պահպանել յայտնի սահմաններում նրա ուրոյն դեմքը, խնայել նրա հնաւանդ ստացւածքները—լեզուն, կրօնը, ազգայնական առանձնայատկութիւնները—խնայել, մի խօսքով, այդ աշխատող և արտադրող արբը, իրբն մի տեսակ յաւիտենական կթան կոմի, որ կարող է իր կուլտուրական աշխատանքի ու ձեռնէրեցութեան իր ուժով, երկրագործութեան, առևտրի, արարարական իր բնածին և հնածին ընդունակութիւններով մնուցանել ու պահպանել ի շխոյ աարբը, որ ներկայումս էր, իրբն աւելի ստորին տիպ բաղաբակրթութեան, որ վարժել էր դարերից ի վեր գլխաւորապէս ռազմական արևեստի մէջ—թալանի ու սպանութեան, սանձարձակ սպասակութեան և կուլտա շահագործման—որ տակաին չէր դուրս եկել նահապետական, խանարած համայնքների շրջանակներից, չէր ընտելացել աշխատանքի աւելի բարձր, արդիւնաբար ձևերի և այդ պատճառով գեռ երկար ժամանակ պիտի քարշ տար մի տեսակ մակարուսային գոյութիւն, թարգմանելով ու արդարացնելով այն ուշագրաւ, Արևելքում բաւականաչափ տարածած երևոյթը, որ կոչուում է գիտութեան մէջ սօցիալական զանգուշուածային պարագիտի զուս:

Եպրիլ բրիտանեայ ժողովուրդների հաշիւն, ստիպել նրանց՝ վճարել գլխահարկ, անխախտ պահպանել նրանց ցեղային կերպարանքը—որից առանձին երկիւղ չունէր տիրապետող, գիւնորական տարրը—և միաժամանակ ճնշել ու սխմել նոյն այդ տարրը, թոյլ չտալ, որ նա զարգանայ «չափից դուրս», որ նա անցնէ յայտնի սահմաններէն, թոյլ չտալ, որ նրա մէջ բողբոջեն ըմբոստացումի սողմեր, վտանգաւոր խալիֆ տիրապետութեան համար, ահաւասիկ այդ բաղաբակական տեսակի իմաստը և գաղափարը: Մի գաղափար, որ, աւազ,

հզօրապէս շեշտում է անգամ այսօր, սամանեան սահմանադրական ռեժիմի տակ...

Օսման, Մահմեդ II, Սուլթան, Ահմեդ, Մահմեդ, Արդիւլ Կոնստանդնուպոլիս, Արդիւլ Ազիզ—ամենքն էլ որոշ չափով հետևող են եղել այդ սիսուեմի, խրախուսելով—մինչև մի յայտնի աստիճան—բրիտանեայ համայնքներին, ստիպել նրանց առաջաւոր տարրերին—կղերին, ամիրաներին, վաճառականներին—յայտնի գիրք, առանձնաշնորհութեան պետական կեանքի մէջ, յաճախ նոյնիսկ յանձնելով բրիտանեաններին կարևոր, պատասխանատու պաշտօններ: Կարմիր Գազանը միայն շեղեց այդ սիսուեմի հրամայականներից և հակառակ իր թափանցող իմացականութեան ու գործնական մտակազմին, տարւելով ընտելային, անասնական վրէժխնդրութեամբ, նետեց երկիրը աւերածի անդունդի մէջ, շորքնելով արգասաւոր աշխատանքի աղբիւրները, անդամալուծելով անասնական կեանքը հակայական տարածութիւնների վրայ, շղթայազերծելով անօրինակ, լանկ-թամուրեան ուրազաններ...

Կամ գլխահարկ—մի շարք ուրիշ յիշատային՝ սուրբերի հետ—կամ խմբովին իսլամացում... Գլխավոր այսպէս է դուել այն ահաւոր օրերի մէջ, երբ զածան մահիկը ստորագրել էր խաչքահա հահագին տարածութեան վրայ Բրիտանեանները նախընտրել են սուրբերը—մի շարք ուրիշ նաստացուցիչ պահանջների հետ—և սուլթաններն էլ զոհ են մնացել գլխավոր աշխատանքի լուծմամբ, ևս առաւել, որ իսլամական վարդապետութիւնն ևս իր մի յողւածով այսպէս էր թելադրում:

Երբ—սուում է Արմինյոն *)—սուլթան Մահմեդ II-ը դրուեց Կ. Պոլիսը, նա ձեռնարկեց անմիջապէս նաճած երկրի կազմակերպման: Այդ նպատակով նրան մտնում էր միայն հետևել բաղաբակական այն կանոնին, որ Երբնշուած էին Կարգաբեկն և իր անմիջական աշակերտներին՝ միջավայրի պայմանները, այն միջավայրի՝ ուր սողմնաւորել էր իսլամական դօքտրինը: Պետք էր պահպանել նաճող բնակի տիրապետութիւնը՝ ցեղով, լեզուով, կրօնով ու բարքերով տարբեր ժողովուրդների վրայ...

1453 թ. մայիսի 29-ին սուլթանը հանդիսուսապէս ժուտք գործեց քաղաքի մէջ և յունիսի 1-ին մեծ շուքով ընդունեց տիեզերական պատրիարք Գեղնապոլիսին—որ բնորում էր իր, սուլթանի հրահանգով մի բանի ուղղափառ քահանաների ու սարկաւազների կողմից—և յանձնեց նրան, բիզանդական թագաւորների ընդունած մեծարանքներով, դաւազանը, զարդարում թանկագին քարերով, որ պատանշան էր հայ սպեկտակաւ իշխանութեան: Երկու օր յետոյ, Բրուսուայի հայ կաթողիկոս Եովակիմ II հրաման ստացաւ Կաթողիկոսական Նոր մայրաքաղաքում 200 հայ բնառնիքով: Մոտ 30,000 հայեր միացան ինչ յետոյ այդ կողմին: Եովակիմը ստացաւ պատրիարքական տիագոս, վիզիերի աստիճանով ու պատիւներով, նոյն ժամանակներում, Կապադով

*) P. Arminjon. La Protection religieuse dans l'Empire Ottoman, La Revue de Paris, 15 Avril 1903.

...սուսով ստորին հոգևեց առաջնորդ հրեաների, որ ուներ իր հաւատակիցներէ վրայ նոյն իշխանութիւնը, ինչ որ երկու պատրիարքները իրենց հօտերէ վրայ. այն է՝ կառավարել իրենց կրօններէ՝ « ա յ ե ա ն ե ռ ի ն », տուրք զնել նրանց վրայ, որեքներն սահմանել և դասելը:

Երեք նւաճած « ազգութիւններ » — յոյներէ, հայերէ և հրեաներէ — առաջնորդներէ իւրաքանչիւրը պատասխանատու իր — ի հարկին իր զխով իսկ — թէ իր համայնքի անդամներէ տուրքերը վճարելու և թէ նրանց ներքին կարգի ու խաղաղութեան համար: Նոյն պատասխանատուութիւնը ընկնում էր վիճակների առաջնորդների և ծխական բաժանաների վրայ: Այդ պատասխանատուութիւնը ուներ և համագոր իշխանութիւն: Տեղեկական պատրիարքը, հաւաքիչ զխաճարկի, ուներ իրեն սօսանդակ, մի թնայուն խորհուրդ, որ միանգամայն ազգային խորհուրդն էր և գերազայն տեսան անձնական կանոնադրութեան խնդիրներում: Նա ուներ սուլթանի մաս իր ներկայացուցիչ գործակալը: Նոր շէր այդ կազմակերպութիւնը, շրջանած տեղական լայն ինքնավարութեամբ, ինչպէս որ զնել Ասիայ մէջ կրթուել էին, արարներից ընդ որինակելով: Նրա անմիջական առաւելութիւններն ակնբեր են. — հպատակութեան մէջ պահել նւաճած ազգաբնակչութիւնները, նրանց ծոցից իսկ բնարած առաջնորդների միջոցով և առանց ծախքի հաւաքել տուրքը, զխաճարկը թիւրք իշխանութիւնները, իրենք բնա շխարհուսելով առյանների իւրամացումը, ծուռ աչքով էին զիտում կրօնախորտութիւնը, որը եթէ ընդհանրանար, կարող էր ցածարեցնել տուրքի աղբիւրը:

Ահաւասիկ « համարերգութեան » պատրանքի անտեսական աստուար:

Թողաւորելով հանդերձ հպատակ առյաններին, իբրև մի մի կրօնական համայնքների, պահպանելու իրենց ներքին կազմակերպութիւնը, որեքները, արարքն ու սովորութիւնները, իւրամական դժգոհները թու՛մ էր նրանց աննաանարգ, նւաստացուցիչ պայմանների մէջ, զիտում էր նրանց իբրև ստոր ցեղ՝ մազմեզական ցեղերի հանդէպ... Ռայեան պէտք է ոչ միայն վճարել զխաճարկը և հողահարկը, այլ և պէտք է զանազաներ մահմեդականից իր զգեստով, իր աների արտարինով, պէտք է միշտ խոնարհագին մեծարանքի ցոյցներ անել ի տես յետին մահմեդական ուսմիկի: Նա շէր կարող զէնք կրել, անարժան էր զինուորական արեւատի մէջ հաւատարեւելու իսլամին. նա շէր կարող ձի հեծնել, նա պէտք է հրաժարուէր բոլոր անձական մարդանքներէ և պէտք էր կնանար, մեղկանար, հաշմանդուէր. նա շէր կարող իր ժամը, ազօթատեղին կառուցանել իր ցանկացած շքով ու ձևով, որոշ չափից աւելի բարձր, շէր կարող բարձրաձայն կատարել իր ժամերգութիւնը, երգել իր սաղմոսները, կազմակերպել կրօնական թափօրներ, նա շէր կարող հնչեցնել զանգակների զողանջն անգամ — ամեն ինչ պիտի կատարուէր գերեզմանային շուքութեան մէջ, ամեն շայն պիտի պապանձուէր... որպէս զի ընտան հասնէր « ստերերի » սկանջներին, չվերաւորէր իւրամ հաւատացեալի զգացութիւնը և որպէս զի եաջն

ու աւետարանը թնային յաւելու մի անարգ ստորագասութեան, մի անպատիւ մոռացութեան մէջ... Հայաստանի հայ ժողովուրդը, ասում են, այն աստիճան մարդուել է, ընտելացել է այդ պապանձուն, մեռելային հոգեբանութեան, որ զեռ այսօր էլ շատ տեղերում հայ ժամերի մէջ շէր տեսնում զանգականեր, շէր լսում զանգահարութիւն:

« Համարերգութիւնը » դառնում էր իրօք մի ծայրայեղ անյարգանք — սանք աւելի պատշաճ խօսք — արհամարհանք հանք զէպի առյանն փաստեր բերներ նաև ստար աղբիւրներից: Նախ ամենից հնեւը: Ահա 8 աւելբրնիէ և 8 ուրնը ֆօր, ահա և Ռիկաֆաւելբերն էլ նշանաւոր, արկածաւեր, իմացական տուրխտներ, որ անդային հարցախորտութեամբ զինւած, զնացել են ուսումնասիրելու այն հետաւոր ժողովուրդների կեանքն ու պատմութիւնը՝ 17-րդ և 18-րդ դարում: Ղատ շէ նրանց վերաբերումը զէպի Արեւելքի տիրող տարրը. տեղաւեղ խօսում են նոյնիսկ զովեստով օսմանցիների, մահմեդականութեան, Ղուրանի մասին: Բայց երբն էլ շէշում են այն խորունկ անտազօնիզմը, որ եղել է մահմեդականի ու հայի միջև.

« Թիւրքերը արհամարում են հայերին՝ նրանց կրօնի համար » — ասում է Պիտտոն 8 ուրնը-ֆօր, որ խօսում է անսովոր յափշտակութեամբ այն ժամանակայ հայերի մասին, համարում է նրանց յերկրագնդի ամենահաշակաւոր վաճառականներ... և զաշխարհի լաւագոյն մարդիկ, ազնիւ, բազմապարի, սօսուած ողջմտութեամբ ու շիտակութեամբ... »:

Աւելի խիտ է Ռիկաֆաւի արտայայտութիւնը կրօնական այդ հակամարտութեան մասին.

« Դէպի քրիստոնեաները նրանք (օսմանցիք) տածում են մի սակալի գարշանք (une aversion horrible) — ասում է նա:

« Զկայ բնութիւն, որ նրանք ի գործ չզննն՝ քրիստոնեաներին ազբատացնելու, դժբախտացնելու համար... Իս համարերգութիւն շէ, այլ հալածանք և տառապանք... »

« Զիշտ է, մատուցմաները հանդուրժում են, որ քրիստոնեաները ունենան իրենց եկեղեցիները, ազօթատեղերը, որոնք վաղուց շինւած են: Ասկայն նրանք թող շէն տայիս նորերը շինելու: Եկեղեցիների կամարները կարող էին շակել տալ, բայց նրանց վրայ որևէ բան աւելացնել — շէին կարող:

1660 թ. — ին, ասում է Ռիկաֆաւ, մեծ հրդեհի զոհ գնացին Ղարթաթի և Պոյսի մէջ մի շարք քրիստոնեայ եկեղեցիներ ու մատուռներ: Բարեպաշտ քրիստոնեաները շուտով նորին կառուցին: Բայց հենց որ շինւածքն աւարտուց, եկան աւերեցին իշխանութեան հրամանով: Արգելւած է, ասում են թիւրքերը, վերաշինել այն եկեղեցիները, որոնց միմիայն հիմերն են թու՛մ... »

* Pitton de Tournafort, Relation d'un voyage du Levant (Տրատ. Ամստերդամ, 1718 թ.), հատ II, էջ 158:

** Ricaut, Histoire de l'état présent de l'Empire Ottoman, հատ. 1670 թ. (trad. de l'anglais).

Մի այլ տեղ, նոյն գրքի մէջ, ասում է Ռիկաֆտ.

«Քրիստոնեաները ճշմարիտ են ամեն կերպով Այն գոյքերը, որ նրանք փաստակում են մեծամեծ դժարութիւններով իրենց աշխատանքի ու ծարարարեւտի շորհին, եւ թակայ են իրենց անձանց յափշտակութեան շին հանդուրժում, որ նրանք — քրիստոնեաները — զէնք ունենան, պատերազմի էլ չեն ասում նրանց, որպէս զի վախկոտ դարձնեն, անընդունակ՝ ձեռնարկելու որեւէ գործ՝ գայթակղութիւնների միջոցին»:

Գանք նորագոյն — նոյնպէս օտար — վկայութիւնների, հրատարակած հայկական խնդրի բորբոքման շրջաններում, անցեալ դարու 80-ական և 90-ական թեւերի մէջ:

Ճիշտ է, ասում է անգլիացի Ջէյմս Կրէէք, թիւրքերի արհամարհանքը թոյլ տալին էր յոյն ու հայ քրիստոնեաներին — որոնք գերադասում էին տուրք վճարել, քան կրօնափոխ լինել — ճիշտ է նրանց թոյլ էր տրուում կատարել իրենց ծէսերը և դաւանել իրենց կրօնը, սակայն նրանց ոչ միայն արգելւում էր զանգակները հնչեցնել, թափօրներ կատարել, ձի հեծնել ու զէնք կրել, այլ և մինչդեռ թիւրքական ձևերն (manners) ու զգեստները տարածւում էին երկրի բոլոր անկիւնները, նրանց — հայերին ու յոյներին — տոկոսում էին կրել այնպիսի զգեստներ, որ բոլորովին նման էին կ ա ն ա ն ց ւ :

Տներն ու եկեղեցիներն հասակն ու լայնութիւնը նախորդած էին օրէնքով, հասցրւած նւագագոյն շափերի Եւ նրանք (քրիստոնեաները) հարկադրւած էին ցոյցերով ու մեծարանքով դիմաւորել իրենց հանդիպած ամենայնպէս մուսուլմանին անգամ:

Տիրող տուրք նայում էր քրիստոնեաների վրայ նախ արհամարհանքով և զրգանքով ինչպէս սպարդացին՝ կոչու ու ապուշ իլոտների վրայ... Մահմեդականի աչքում քրիստոնեան նոյնն էր, ինչ որ էր իր եզր կամ էշը, օգտակար սոսկ իբրև բեռնակիրներ... Չբիւած լինելով զէնք կրելու իրաւունքից, երբէր շմարելով պատերազմի մէջ՝ քրիստոնեաները այդպիսով կանացիացան (effeminate) և դարձան նւագ վտանգաւոր ապստամբութեան տեսակետից »):

Այսպէս է վկայում Ջէյմս Կրէէք, որ ընդհանրապէս նպաստաւոր լեզու է գործածուում մահմեդականների վերաբերմամբ:

Նոյն վկայութիւնները գտնուում ենք մի այլ հետաքրքրական և անծնիմ աշխատութեան մէջ, Armenia. A historical sketch, by an old Indian (էջեր 87—90):

Ասել արդեօք, թէ ինչ աւերիչ, այլասեռող ազգեցութիւն էին գործում հայ տարրի վրայ՝ կրօնական խտրութիւններից բղխող այդ գարաւոր անարգական յարաբերութիւնները: Այլասեռում — ֆիզիկական, մաստոր ու հոգեկան, աղասեռում — բ ա ռ ո յ ա կ ա ն :

Եւ այն հեռուոր ժամանակներից, մեր շուրջում պատմութեան այն խորունկ ու ոճրանիւթ ծալքերից էր, որ ժառանգեցինք անասնական սերվիլիզմի և բարոյական ամեն տեսակ ախտերի այն դարհուրելի բնուր, որ այնքան ճանաչեցինք մեր մախուկ յեղափոխութեան ըն-

թացքը, որ այնքան թունաւորեց հայկական մթնոլորտը, — մասնութեան, լրտեսութեան, դաւաճանութեան համաձարակով — որ այնքան նսեմացրեց արտաքին աշխարհի մէջ մեր հոյակապ ու ազմիկների գիւցտգնական թափքները:

Այն մասը շրջաններից ժառանգւած յասկութիւններն են, որոնց վրայ ակնարկում է և Ս. Ղազարի հինաւորաց բանաստեղծ-հիւրը, Չայլդ-Հարօլդի վեհափառ երգիչը, որ ասում էր հայերի մասին, իր սրտաուռ նամակներում (1817 թ.):

... Their virtues have been those of peace, and their vices those of compulsion.

Նրանց աւաքնութիւնները խաղաղութեան աւաքնութիւններ են, իսկ արատները — արգիւնք են բռնութեան, բռնադատութեան ...

Եթէ լօրդ Բայրըն ասրէր հարիւր տարի ևս, գուցէ չպիտի գրէր այդ նշանաւոր հայերի կողմից այնքան անգամ հռոմեացի նախադատութեան առջի մասը:

It would be difficult, perhaps, to find the annals of a nation less stained with crimes...

Գժեար կը լինէր թերևս դտնել մի այլ փողովդդի տարեգրութիւն, այնքան ազատ ոճիւրներից, այնքան քիչ սրբապղծւած ոճիւրներով ...

Ինչ կարող էր լինել արհամարհւած և տրորւած, մշտնջենական անարգանքի ու բռնութեան տակ դեգերող մ ա Ր Դ - գ Ր ա ս ա ի վիճակը... Ստրուկ, տիրապաշտ, նենգաւոր և ծածկամիտ, խարդախ և խաբեբայ, կեղծ քծնող ու շողոքորթող և երկչոտ, երկչոտ... Effeminate — լմենից դաժան հնչում է մեր ականջին անգլիացի ուսումնասիրողի այդ սարսափելի խօսքը:

Դնացած — արդարև... Եւ իշխող տարրի նպասակն էլ հէնց այդ էր. — առնել իր վրայ զինուորական մարզանքների մենաշնորհը և դաստիարակել բոլոր «գիւժուրներին» մի այնպիսի հեռատես և դիւային մեթոդով որ նրանցից դուրս գան միայն հլու կին-բաղաբացիներ, անընդունակ՝ ըմբոստանալու, զէնքով դիմադրելու ընդունակ՝ միայն լուելու և պարանոցը ձկնելու...

Ահա թէ ինչ տեղ մեզ սուլթանների և փաշաների մեծահաջակ «համբերողութիւնը»:

Երևոյթը ունի, սակայն, իր դրական կողմերն ևս՝ կրօնական խտրութիւնը իր ձգած անըրպեաներով, թւում է թէ մի յայտնի շափով նպաստել է քրիստոնեայ տարրերի ազգային պահպանութեանը՝ ՈՎ գիւտէ... Եթէ օսմանցիք չձգէին կրօնի այդ անանցանելի խրամատը՝ իսլամի ու «գիւժուրի» միջև, եթէ նրանց չխորշէին ու չգարշէին այդ վերջինից և փոքր ինչ աւել յարգանք տածէին դեպի հպատակ ժողովուրդները՝ նրանց մարդկային ու ազգային արժանապատւութիւնը եթէ արհողի ու հպատակի միջև լինէին փոքր ինչ նմա-

*) James Creagh, Armenians, Koords and Turks (Լոնդոն, 1880 թ.). էջեր 41, 139, 140—143:

ութիւն կուլտուրական, քաղաքակրթական ձգտումների աշխատանքի տեսակետից, եթէ հայ ազգը ունենար էթնոքրիկ հնարաւորութիւն ժողովրդի տիրապետող եղին, ուրտ շփումն հաստատելու նրա հետ, — ո՞վ գիտէ... ուցէ նա ձուլէր հետզհետե՛ բեկոր առ բեկոր, այդ խող, օսմանեան զանգուածի հետ, կը լուծէր թերևս իզգով ու բարբոզի ինչպէս որ լուծել է — իր խիստ եշուած օտարամուլ բնազդի շնորհիւ — կեսարիայում, լիլիկիայում, Թուրքահայաստանի մի քանի այլ վայրերի ճշմարտութեամբ նաև Անդրկովկասի և Ռուսաստանի սուլթանի և վրացիացի գաւառներում, Լեհաստանի, Ռուսարիայի հայկական գաղթավայրերում:

Կրօնը միայն, հայ եկեղեցին կը մնար կանգուն, ինչպէս կանգուն է բեսարաբիայի, Գալլիցիայի, Տրանսիլվանիայի կենտրոններում, իբրև տիւրիստոսի հարկաւորանքի բնական ազատ ու բարգաւաճ հայրենիքի...

Սակայն ձուլումը բարբախտաբար, դժուարանում էր մասամբ հէնց այն հանգամանքով որ տիրող տարրը սկզբից ի վեր պահել է այլակրօններին մի յայտնի արարած ու թե՛ ան վրայ, համարել է մի տեսակ սրբապղծութիւն՝ սերտ շփումի մէջ մտնել դանձաբար՝ և «նշովեալ» ցեղերի հետ, ձգել է նրանց, այսպէս ասած, իրենց ճակատագրին, աւելով նոյնիսկ ինքնօրինակ թե՛ ան մի բանի փշրանք և հետաքրքրելով լոկ նրանց գրաստի աշխատանքով, նրանց արին-քրտինքով արտաբերած հարստութեամբ:

Մի հարց ևս՝ Արդեօք իսլամի և քրիստոնէութեան միջև գիտակցաբար ձգւած անջրպետների և իրամատենների մէջ որևէ դեր չի՞ ունեցել իշխող տարրի, այսպէս ասած, ինքն ապաշտպանութեան մտահոգութիւնը: Արդեօք չի՞ վախեցել նա — այդ կղեր-զնւորական թէ՛ օկրատիկ դասակարգը — թէ քրիստոնեայ աւելի բարձր, կուլտուրական տարրերը իսլամացնելով՝ կարող է մտնել վտանգաւոր մի *intimus*, մի «ինքնակոչ» զեկավարող կորիզ այդ տիրական, առանձնաշնորհեալ ի ծնէ և ի պաշտօնէ իսլամ, ուղղափառ դասակարգի մէջ և այդպիսով խախտել նոյն այդ դասակարգի միահեծան տիրապետութիւնը, հեղեմօնիան:

Հարցը դնում ենք միայն... առանց որոշակի պատասխանել կարողանալու:

Մի անլուծելի առեղծւած է թուում մեր տեսութեան այն նշանաւոր կեար, որ վերաբերում է կրօնական համարաբարութեան և իսլամահպատակ քրիստոնեաների ապապայման ճակատագրին: Մեկը բազմութիւ հակասութիւններից՝ որոնցով այնքան փայլում է օսմանեան ինքնատիպ քաղաքական սիստեմը, Հակասութիւններ — մերթ գիտակից, նպատակաւոր, մակկեալների, որոշ շահերի հետապնդող, մերթ — անգիտակից, անհեթեթ ու տարբարուծող... Այդպէս, օրինակ, XIX դարի 60-ական թւականներին այդ սիստեմը առաջին էր մեզ կուլտու-

րական ներքին ինքնօրինութիւն, որ այն ժամանակայ պայմանների մէջ հակայական վաստակ էր մի տրորած, գրեթէ իսպառ անազուրկ եղած ցեղի համար. օսմանեան պետութիւնը, առանց լինելու հարկադրւած, բռնադատւած, առանց լսելու հայերի կողմից դէմքի շառաչ ու սաղմի որոտ (Չէյթուներ դեռ բաւական չէր), առաջին էր նրանց իրաւունք ու հնարաւորութիւն՝ հիմնելու ազգային-հասարակական պէս-պէս հաստատութիւններ, պատելու Հայաստանը դպրոցների ցանցով, զարկ տալու, մի խօսքով, ազգային վերածնութեան և ազատութեան, — հապա միւս կողմից՝ նոյն քաղաքական սիստեմը յամառաբար ջնջում էր մեզ գաւառներում, գաղտնօրէն ու յայտնօրէն ճարակում էր յաջա ամբողջ Եւրոպայի, ճարակում էր սովով, գաղթով, հողային գրաւումներով, տուրքերով, քրդերով ու չէրքէզներով...

Եթե՛ անասնական թուականների պատմական օրերում — նոյն ճշացող հակասութիւնը: Մի կողմից սուլթանական կամարիլլան ամառային իրախոսում էր հայկական ինքնավարութեան ծրագիրները, թողաւորում էր նոյնիսկ յատուկ պատգամաւորութիւն առաքել ի բերլին և ամեն տեսակ դիւրութիւններ էր ընծայում պատրիարքին ու պատգամաւորութեան, — հապա միւս կողմից՝ նոյն կամարիլլան թալանի ու սպանութեան, արեան և արտասուքի թատր էր դարձնում օսմանեան Հայաստանը...

Հակասութիւն — թէպէտ և ոչ նոյնանման — տեսնում ենք և այն հեռաւոր ժամանակներում: Մի կողմից «քաղաքական սիստեմը», իր դոյութեան շահերից իսկ հրահանգւած՝ հրաժարուած էր քրիստոնեաներին իսլամացնելուց — հապա միւս կողմից մենք տեսնում ենք նոյն այդ վաղեմի դարերում կրօնական հալածանքների, բռնի իսլամացման և հայկական նահատակութիւնների մի անվերջ շարան, որոնք յաճախ կատարւել են իսլամ խուժանի ձեռքով և որոնց գրեթէ միշտ նախագահել են գաւառական իշխանութիւնները, ի դէմս վալիների, փաշաների, գայմագամների... Կարծես թէ կենտրոնը, իբրև աւելի խելահաս և աւելի գիտակից համապետական բարգաւաճման շահերի — գուցէ նաև վախենալով «հեղեմօնիայի» խախտման հեռապատկերից — հրաժարւել է ընդհանրապէս իսլամացման քաղաքականութիւնից, իսկ այնտեղ, հեռուն՝ խուժանները և իրենց անձնական առաջնորդները, իբրև աւելի ռախանձախնդիր կրօնի բարգաւաճման, օգտւել են սովորաբար պատեհ առիթներից, որպէս զի մոռնալով արձագանք տան դուրանի սաղմաշուճ պատգամներին*), գրոհ ասն գիտալուրի դէմ և խաչի աւերակների վրայ տնկնել իրենց մահիկը:

Յամենայն դէպս կրօնը և կրօնական հակամարտութիւնը, իբրև ուրոյն ու զօրաւոր ներազդակ — անկախ նոյնիսկ անտեսական գործօններից, անկախ ամեն դասա-

*) Այդ մասը — գալ յօգւածում:

